

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOSOPHY, PSYCHOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (40)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2023

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն»
հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010
թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր
Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Философия, Психология»
выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося
в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».

Three issues of “Journal of Yerevan University. Philosophy, Psychology” are
published annually. The journal has been published since 2010. It is the
successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ Հարությունյան Էդվարդ (փ.գ.դ., պրոֆ.),
Ավանեսյան Հրանտ (հ.գ.դ., պրոֆ.), Բաղրամյան Մարիա (փ.գ.դ., պրոֆ., Իռլանդիա),
Բարսեղյան Հակոբ (փ.գ.դ., Կանադա), Գոսսերիես Աքսել (փ.գ.դ., պրոֆ., Բելգիա),
Չաքարյան Սեյրան (փ.գ.դ., պրոֆ.), Ժեմոյտել-Պյոտրովսկա Մագդալենա (հ.գ.դ.,
պրոֆ., Լեհաստան), Լուբովսկի Դմիտրի (հ.գ.դ., պրոֆ., Ռուսաստան), Խա-
չատրյան Նարինե (հ.գ.թ., դոց.), Կոշկարյան Մարիաննա (փ.գ.դ., պրոֆ., ՄՄՆ),
Շահվերդյան Գայանե (հ.գ.դ., պրոֆ.), Պետրոսյան Սիլվա (պատ. քարտուղար,
փ.գ.թ., դոցենտ)

Редакционная коллегия:

Главный редактор: Арутюнян Эдуард (д.флс.н., проф.),
Аванесян Грант (д.псих.н., проф.), Баграмян Мария (д.флс.н., проф., Ирландия),
Барсегян Акоп (д.флс.,н., Канада), Госсериес Аксель (д.флс.н., проф., Бельгия),
Жемойтель–Петровска Магдалена (д.псих.н., проф., Польша), Закарян Сейран
(д.флс.н., проф.), Кошкарян Марианна (д.флс.н., проф., США), Лубовский
Дмитрий (д.псих.н., проф., Россия), Петросян Силва (отв. секретарь, к.флс.н.,
доц.), Хачатрян Нарине (к.псих.н., доц.), Шавердян Гаянэ (д.псих.н., проф.)

Editorial Board:

Editor-in-chief: Harutyunyan Eduard (Sc. D. in Philosophy, Professor),
Avanesyan Hrant (Sc. D. in Psychology, Professor), Baghramyan Maria (Sc. D. in
Philosophy, Professor, Ireland), Barseghyan Hakob (Sc. D. in Philosophy, Canada),
Gosseries Axel (Sc. D. in Philosophy, Professor, Belgium), Khachatryan Narine
(PhD in Psychology, Associate Professor), Koshkaryan Marianna (Sc. D. in Philoso-
phy, Professor, USA), Lubovski Dmitri (Sc. D. in Psychology, Professor, Russia),
Petrosyan Silva (Executive Secretary, PhD, Associate Professor), Shahverdyan
Gayane (Sc. D. in Psychology, Professor), Zakaryan Seyran (Sc. D. in Philosophy,
Professor), Żemojtel-Piotrowska Magdalena (Sc. D. in Psychology, Professor, Poland)

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ՄՅՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Հոդվածում վերլուծվում են Տաթևի համալսարանի նշանավոր աստվածաբան-փիլիսոփա սուրբ Գրիգոր Տաթևացու (1346-1409) գեղագիտական հայացքները, ի մասնավորի՝ գեղեցիկի մասին պատկերացումները՝ նրա աստվածաբանական-բնագանցական, մարդաբանական և բարոյագիտական ըմբռումների համատեքստում: Տաթևացու գեղագիտական հայացքների, գեղեցիկի, արվեստի, արհեստի, աստվածային և մարդկային ստեղծագործության մասին ուսմունքի հիմքում ընկած են կրոնաաստվածաբանական աշխարհայացքի (միաստվածապաշտության, արարչապաշտության, նյութական-զգայական ոլորտի նկատմամբ հոգևորի գերազանցության, սիմվոլիզմի, այլաբանության և այլն) սկզբունքները և դրանց համահունչ կամ դրանց հարմարեցված փիլիսոփայական ըմբռումները: Նրա գեղագիտական հայացքները համադրական բնույթի են, ինչը պայմանավորված է ինչպես միջնադարյան մտածողությանը բնորոշ հոգևոր գործունեության ոլորտների չտարբերակվածությամբ, այնպես էլ գեղագիտական տարբեր ավանդույթների (աստվածաբանական-եկեղեցական, խորհրդագագացական, ճգնավորական և աշխարհիկ-փիլիսոփայական) համատեղմամբ: Նա առանձնացնում է գերբնական/աստվածային և բնական/մարդկային գեղեցկություններ, արարված աշխարհում առկա գեղեցկության տարբեր աստիճաններ, արժևորում և խորհրդապաշտորեն ու այլաբանորեն մեկնաբանում երկրային գեղեցկությունները, գեղեցիկին վերագրում փոխկապակցված ու իրար լրացնող՝ կատարելության, չափավորության, համամասնության, մաքրության (փայլի, գույնի, լույսի), ներդաշնակության և ամբողջականության հատկություններ: Գեղեցիկը, օբյեկտիվ հատկություններից զատ, ունի նաև սուբյեկտիվ երանգավորում, որը կապված է մարդու ճանաչողական և գնահատողական ունակությունների հետ: Տաթևացու մտածումներում գեղեցիկի ընկալումը շաղկապված է բարոյագիտական ըմբռումների՝ բարու և չարի, մարդու կյանքի իմաստի և աշխարհում նրա գտնվելու նպատակի հետ: Նա բարին նույնացնում է գեղեցիկի հետ, իսկ չարը՝ տգեղի ու այլանդակի, բարին ու գեղեցիկը իմաստավորում «մեղսագործություն-փրկություն» հարացույցի տեսանկյունից: Ընդհանուր առմամբ Տաթևացին պաշտպանում է գեղագիտական այն տեսությունը, ըստ որի՝ թեև գեղեցիկը և ճշմարիտ ստեղծագործությունը գտնվում են աստվածային աշխարհում և հոգևոր ոլորտում, այնուհանդերձ դրանց իմացումը և գեղագիտական ընկալումն սկսվում են զգայահասու իրերի ու երևույթների աշխարհից, այսինքն՝ աստվածայինից ու հոգևորից զատ՝ կարևորվում է երկրային գեղեցկությունների և մարդկային արվեստի ու արհեստի արդյունքների գեղագիտական նշանակությունը:

Բանալի բառեր – *Գրիգոր Տաթևացի, միջնադարյան աշխարհայացք, խորհրդապաշտություն, այլաբանություն, գեղագիտություն, գեղեցիկ, գեղեցիկի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկություններ, արվեստ ու արհեստ, ստեղծագործություն*

Միջնադարյան բազում մտածողների նման սուրբ Գրիգոր Տաթևացու (1346-1409) գեղագիտական հայացքները, հատկապես գեղեցիկի մասին պատկերացումները անգատելի են կրոնաստվածաբանական ու փիլիսոփայական՝ գոյաբանական, իմացաբանական, մարդաբանական և բարոյագիտական ըմբռնումներից: Դա պայմանավորված է ոչ այնքան և ոչ միայն այն բանով, որ միջնադարում գեղագիտությունը դեռևս առանձին գիտակարգ չէր, այլև միջնադարյան կրոնափիլիսոփայական մտքի յուրահատկություններով: Միջնադարում եկեղեցին հովանավորում և վերահսկում էր հոգևոր գործունեության բոլոր ոլորտները, որոնք իրենց բնույթով, նպատակով, դրսևորման ձևերով ու բովանդակությամբ կախված էին կրոնական աշխարհայացքից և կոչված էին սպասարկելու աստվածաբանությունը: Աստվածակենտրոն աշխարհայացքի հիմքում ընկած էր «մեղսագործություն-փրկություն» հարացույցը, որը ենթադրում էր մարդկային կեցության գլխավոր նպատակին փրկությանը հասնելու համար բոլոր միջոցների համախմբում, կրոնաբարոյական միանման չափանիշների տեսանկյունից մարդու գործունեության և տեսական փնտրտուքների գնահատում: Այլ խոսքով՝ միջնադարում հոգևոր գործունեությանը բնորոշ էին միասնականությունն ու չտարբերակվածությունը, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ոլորտի մասին պատկերացում կազմելու համար այն պետք է դիտարկել ամբողջի մեջ, ավելի ընդգրկուն սոցիոմշակութային համատեքստում¹:

Բնականաբար, Գրիգոր Տաթևացու գեղագիտական հայացքների, գեղեցիկի, արվեստի, արհեստի, աստվածային և մարդկային ստեղծագործության մասին ուսմունքի² հիմքում նույնպես ընկած են կրոնաստվածաբանական աշխարհայացքի սկզբունքները (միաստվածապաշտության, արարչապաշտության, նյութական-զգայական ոլորտի նկատմամբ հոգևորի գերազանցության, մարմնի նկատմամբ հոգու առավելության, խորհրդապաշտության, այլաբանության և այլն) և դրանց համահունչ կամ դրանց հարմարեցված փիլիսոփայական ըմբռնումները: Հոգևոր գործունեության միասնականության և չտարբերակվածության սկզբունքը պայմանավորել է Տաթևացու գեղագիտական հայացքների համադրական բնույթը, որի դրսևորումներից է ինչպես կրոնաստվածաբանական, խորհրդագագացական (միստիկական), ճգնավո-

¹ Տե՛ս **Гуревич А.** Категории средневековой культуры. М., 1970, էջ 11:

² Գրիգոր Տաթևացու գեղագիտական հայացքների, ի մասնավորի՝ արվեստի և գեղեցիկի մասին տե՛ս **Հ. Հ. Հակոբյան**, Գրիգոր Տաթևացին արվեստի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1973, թիվ 4, էջ 105-112, **Ա. Միրզոյան**, Գրիգոր Տաթևացին և գեղեցիկի խնդիրը, «Հայ էսթետիկական մտքի պատմությունից», հ. 4, Եր., 2002, էջ 66-73:

րական և աշխարհիկ-փիլիսոփայական գեղագիտական տարրերի, այնպես էլ գեղեցիկի մեկնաբանության աստվածաբանական-բնագանցական, իմացաբանական, մարդաբանական և բարոյագիտական տեսանկյունների համատեղումը:

Տաթևացին պաշտպանում է գեղեցիկի մասին այն տեսակետը, ըստ որի՝ գոյություն ունեն աստվածային, երկնային, վերբնական և երկրային, մարդկային, բնական (զգայահասու և մտահասու) գեղեցկություններ, որոնք ծագումնաբանորեն կապված են միմյանց: Գեղեցիկն ունի աստվածային ծագում. աշխարհը, արարված իրերը գեղեցիկ են, որովհետև ստեղծվել են գեղեցկագույն Աստծո կողմից: Պլատոնի այն միտքը, թե «լավագույնը գեղեցիկից բացի ուրիշ ոչինչ չի կարող ստեղծել»³, Տաթևացին վերագրում է Աստծուն, որն ստեղծել է տիեզերքը գեղեցիկ, կատարյալ ու կարգավորված: Աստված հավերժական, բացարձակ, գերզգայական ու վերբնական գեղեցկությունն է, ամենայն գեղեցկության մարմնացումը, աղբյուրն ու չափանիշը: Գեղագիտական տեսանկյունից մեկնաբանելով արարչագործության ընթացքը Տաթևացին նշում է, որ Աստված ստեղծագործելով **գարդարում է երկինքն** ու երկիրը տարբեր **«գարդերով ու գեղեցկություններով»**: Երկնքի «արտաքին սրահը» գարդարում է լուսաստուններով և «իմանալի էակներով», որ մարդիկ, դա տեսնելով, պատկերացնեն, թե որքան առավել է «ներքին սրահի» գարդարանքի գեղեցկությունը: Իսկ Աստված երկրին «չորս ազգ գարդ և գեղեցկություն ետ»՝ ա) երկրի ընդերքում տեղակայեց ազնիվ մետաղներ (ոսկի, արծաթ և այլ պատվական քարեր), բ) երկրի երեսը գեղեցկացրեց զանազան բույսերով ու ծառերով, գ) օդում, ջրում և ցամաքում բնակեցրեց զանազան թռչուններ ու կենդանիներ, գ) իսկ **«չորրորդն գարդ և գեղեցկություն մարդն է ի վերայ երկրի»**⁴ (այս և հետագա ընդգծումներն իմն են – Ս. Զ): Տիեզերքի գարդարման/գեղեցկացման գործը շարունակում է մարդը՝ արհեստների միջոցով ստեղծելով օգտակար ու վայելչական իրեր, իսկ արվեստների միջոցով՝ վերափոխելով մարդկանց: Օրինակ, եթե վարդապետները «զոհաս հոգիս առնեն այր կատարեալ», ապա «արհեստաւորք՝ գոյացուցանեն յանպատշաճ իրաց պատշաճաւորս և պիտանիս. որպէս հիւսունք ի մայրից՝ սեղան և աթոռ: Կարուակք յօղեաց զկօշիկս և զրզգեստս: Դարբինք ի քարանց երկաթ. և երկաթոյ տուսեր և այլ ինչ գործի: Ահա այսոքիւք նմանին մարդիկ աստուածային և արարչակիցք կոչին»⁵:

Երկրային գարդերն ու գեղեցկությունները աստվածային գեղեցկության արտացոլանքն են: Ելնելով այն մտքից, որ «յամենայն արարածս զԱստուած գտանեմք իբրև հայելի», և «արարածք գոչեն թէ Աստուած է», Տաթևացին կարծում է, որ երկրային գեղեցկությունները

³ Պլատոն, Երկեր չորս հատորով, հ. 3, Եր., 2011, էջ 112:

⁴ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պօլիս, 1740, էջ 500:

⁵ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Ոսկեվորիկ, Կ. Պօլիս, 1746, էջ 17:

կարծես թե գոչելով հաստատում են՝ **«թե ստեղծողն մեր բիրապատիկ գեղեցիկ է»**⁶: Տաթևացին բնազանցական խորհրդապաշտության ոգով պնդում է, որ արարված իրերը խորհրդանշում-իրագեկում են աստվածային աշխարհի մասին, իրենց մեջ թաքցնում աստվածայինի՝ «հոգևոր գեղեցիկի» հետքերը: Եթե բնազանցական խորհրդապաշտությունն արարված իրերի մեջ փնտրում է աստվածայինի հետքերը (կամ՝ «շարունակաբար սրբագործում, որովհետև թաքնված աշխարհը սուրբ էր, իսկ խորհրդանիշներով մտածելը ուսյալ մարդկանց կողմից անուսում մարդկանց մտածելակերպին բնորոշ կախարդական պատկերներով մտածողության սուկ մշակումն ու պարզաբանումն էր»⁷), ապա «համընդհանուր այլաբանության» մոտեցման համաձայն՝ արարված իրերը, բացի իրենց բուն նշանակությունից, ունեն նաև բարոյախրատական, փոխաբերական ու խորհրդագագացական նշանակություններ: Այս առումով հիացմունքի է արժանի ոչ թե և ոչ այնքան իրերի ֆիզիկական տեսքը, այլ որքան դրանց վերագրվող աստվածայինի կամ բարոյականի մասին իրագեկող խորհրդանշական ու այլաբանական բովանդակությունը: Պատասխանելով քրիստոնյաներին նյութապաշտության ու կռապաշտության մեջ մեղադրողներին՝ Տաթևացին պատկերահարգական գեղագիտության ոգով նշում է, որ քրիստոնյաները ոչ թե կռապաշտ ու նյութապաշտ են, այլ աստվածապաշտ, խաչապաշտ ու պատկերապաշտ, որովհետև ոչ թե պաշտում են նյութական բոլոր իրերը կամ պատկերները, այլ միայն տերունականը (Քրիստոսի, Աստվածածնի, Խաչի, սուրբգրային), որոնցում դրսևորվում են աստվածային գորությունն ու ներգործությունը. «Այդ դուք միայն զխաչին նիւթն տեսանէք, եւ զծածուկ խորհուրդ նոցա ոչ իմանայք, որպէս այր, որ ոչ զիտէ զդպրութիւն, զձեւ գրոյն միայն տեսանէ, այլ զծածկեալ բանն որ ի նմա, ոչ զիտէ: Խաչն նշան է Քրիստոսի եւ փրկութեան մերոյ, եւ զէն ընդդէմ թշնամոյն, զոր դուք ոչ զիտէք»⁸:

Աստվածային գեղեցկությունն արարված աշխարհում դրսևորվում է տարբեր կերպ: Արարչագործության շնորհիվ ստեղծվում է գոյերի սանդուղք, որի աստիճաններն իրարից տարբերվում են ըստ այն բանի, թե որքանով են մերձ աստվածային աշխարհին: Այսպես, երկնային գոյերը ավելի կատարյալ են ու գեղեցիկ, քան երկրային գոյերը, քանի որ առաջինների բնությունն ավելի մերձ է աստվածային բնությանը: Մեջբերելով Արիստոտելի միտքը՝ Տաթևացին գրում է, թե՛ **«մարմինն ուրչափ պատուականագոյն է և գեղեցիկ՝ պարտ է զի տեղեւ բարձրագոյն լիցի, որպէս երկիրս որ անարգ է քան զամենայն մարմին ունի ըզներքին տեղին: Եւ ջուրն որ պատուական է քան զհողս՝ բարձրագոյն է: Եւ օդն որ**

⁶ **Նույն տեղում**, էջ 41:

⁷ **Ле Гофф Ж.** Цивилизация средневекового Запада. М., 1992, с. 307.

⁸ **Գրիգոր Տաթևացի**, Ընդդէմ կորուսեալ ազգին տաճկաց..., «Բ. Կիլիկերեան, Իսլամը հայ մատենագրութեան մէջ, Ա., Գրիգորի Տաթևացոյ Ընդդէմ տաճկաց, Բ., Ի քաշունէ քաղածու, Վիեննա, 1930» գրքում, էջ 139:

ևս պատուական է՝ բարձրագոյն է քան զգուրն: Եւ հուրն որ առաւել պատուական է՝ բարձրագոյն է քան զամենայն»⁹: Գեղեցիկ է այն ամենը, ինչ մարդուն մերձեցնում է աստվածայինին, իսկ տգեղ՝ ինչ մարդուն հեռացնում կամ օտարում է Աստծուց:

Թեև Տաթևացին ըստ էության չի քննարկում գեղեցիկին աղերսվող տեսական հարցեր, այդուհանդերձ տարբեր առիթներով անդրադառնում է գեղեցիկի բնությունը բացահայտող հասկություններին: Նա գեղեցիկին վերագրում է կատարելության, չափավորության, համամասնության, կարգավորվածության, համաչափության, հավասարակշռության, ներդաշնակության և ամբողջականության հասկությունները, որոնք փոխկապակցված են և լրացնում են մեկը մյուսին: Դիտարկելով նախատիպի և պատկերի հարաբերակցության հարցը՝ Տաթևացին գրում է. «Գիտելի՛ է, զի երից է պատկերին գեղեցկութիւն որով նմանի ի նախատիպն: Նախ՛ չափաւոր ձևն: Երկրորդ՝ հաւասար մասունքն: Երրորդ՝ յարմար շուքն: Արդ՝ աստուածային գեղեցկութիւնն ո՛չ այսու երանգօք զարդարի զի զմեզ ի նմանն իւր կազմեսցէ: Այլ անճառ երանութիւնն և առաքինութիւնն է Աստուծոյ գեղեցկութիւնն զոր մեզ պարգևեսց. այսինքն մաքրութիւն, անախտութիւն, և ի չարէն օտարութիւն ասէ Նիւսացին սուրբ Գրիգոր»¹⁰: Արդ, գեղեցիկին բնորոշ են չափավորությունը, համամասնությունը և «շուքն»՝ շքեղությունը, պերճաշքությունը կամ փայլը, հաճելի տեսքը (նախատիպի հետ կապված նաև հետքը, ցոլքը, իսկ միգուցե, եթե նկատի ունենաք «շուքի» արեոպագիտյան ծագումը՝ «հոգևոր լույսի փայլը»): Ավելորդ չէ նշել, որ Տաթևացու թվարկած գեղեցիկի երեք հասկությունները հիշեցնում են Թովմա Աքվինացու՝ գեղեցիկը բնութագրող այն միտքը, թե գեղեցկության համար պահանջվում է երեք հասկություն՝ ա) առաջին հերթին ամբողջականություն կամ ավարտվածություն, քանի որ ոչ ամբողջական իրերը տգեղ են իրենց պակասության պատճառով, բ) ամբողջի մասերի համամասնություն կամ ներդաշնակություն, գ) պարզություն կամ մաքրություն, քանի որ իրերը անվանվում են գեղեցիկ, երբ դրանք ներկված են պարզ, փայլող գույներով¹¹: Ի դեպ, մի այլ առիթով մատնանշելով գեղեցկության երեք հասկանիշ՝ Տաթևացին այս անգամ թվարկում է նաև «մաքրությունը». «Եւ գեղեցկութիւն մարմնոյն բաղկանայ երից. այսինքն ի մաքրութիւն. ի չափաւորութիւն. և ձև անդամոցն»¹²:

Գեղեցիկը ենթադրում է ամբողջի մասերի համահավասարություն ու համաչափություն, մասերի միջև փոխհամաձայնեցված ներդաշնակ գործունեություն, ամբողջի մասերի կամ անդամների գործառույթների պահպանում և դրանց միջև «արդար» ու հավասարակշռված հարաբե-

⁹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Չմեռան հատոր, էջ 686:

¹⁰ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարգմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 271:

¹¹ Այդ մասին տե՛ս Лосев А. Ф. Эстетика Возрождения. М., 1978, էջ 150-151:

¹² Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 776:

րությունների հաստատում: Արարված իրերի գեղեցկությունը դրանց մասերի ամբողջության և միասնության մեջ է. «**Որպես բոլոր մարդն անդամօքն գեղեցիկ է և կենդանի. և թէ մի յանդամոյն պակասի, եղև գազիր. այսպէս ժողովուրդն բաժանեալ ի բարի առաջնորդէ. և աշակերտ ի վարդապետէ. և ընկեր յընկերէ, գազիր է և գարշ**»¹³: Օրինակ, հոգու յուրաքանչյուր մասի առաքինություն ունի իր դրսևորման սահմանն ու չափը, որոնք խախտվելու դեպքում տվյալ առաքինությունը վերածվում է իրեն հակադիր հատկության՝ դրանով իսկ փլուզելով հոգու մասերի ներդաշնակությունն ու հավասարակշռվածությունը: Չափավորությունը, չափի և կշռի հավասարության պահպանումը «գեղեցկացնում» են նաև տնտեսական և քաղաքական իրողությունները. «**Եւ ի հաւասարութենէ չափոց և կշռոց բազում օգտութիւն է և շահ: Նախզի քաղաքական օրէնքն և բարեկարգութիւնն ամբողջ մնայ և գեղեցկագարդ, ի հաւասարութենէ կշռոց և չափոց**»¹⁴: Գեղեցիկին բնորոշ է նաև կատարելությունը, իսկ ըստ Տաթևացու՝ կատարյալն այն է, ինչ չունի թերություն: Կատարյալը հանգույն է ամբողջականությանը: Համանմանություն անցկացնելով աստվածային և մարդկային կատարելության միջև՝ Տաթևացին նշում է, որ Աստված կատարյալ է սուրբ երրորդությամբ, իսկ «մարդս երրորդութեամբ է կատարեալ. հոգւով և մարմնով և բանիւ. և եթէ մինն պակասիցէ՝ անկատար է մարդն...»¹⁵: Եթե որևէ իր կատարյալ է ըստ իր տեսակի, ապա Աստված ամբողջությամբ կատարյալ է, որովհետև չունի որևէ թերություն:

Գեղեցիկի հիմքում կարող են ընկած լինել ոչ միայն ամբողջի մասերի ու տարրերի միասնանությունը, այլև տարբերություններն ու հակադրությունները: Արարչագործության հետևանքով գոյը բաժանվում է երկու տարասեռ ոլորտի՝ աստվածայինի և մարդկայինի, երկնայինի և երկրայինի, աննյութականի և նյութականի, այսկողմնային և այնկողմնային աշխարհների և այլն, որոնք ունեն իրար հակադիր հատկություններ՝ հավերժական-անցողիկ, բացարձակ-հարաբերական, անփոփոխ-փոփոխական, կատարյալ-անկատար, բարի-չար, գեղեցիկ-տգեղ և այլն: Ավելին, որոշ իմաստով տիեզերական ներդաշնակության հիմքում ընկած են հենց այդ հակադրությունները, ինչը նշանակում է դրանց համագոյության անհրաժեշտությունը: Հակադրությունները փոխկապված են այնպես, որ հնարավոր չէ մեկի գոյությունը պատկերացնել առանց մյուսի: Տաթևացու կարծիքով՝ աշխարհը գեղեցիկ է, որովհետև արարվածները զանազան են, այսինքն՝ «անհատ գոյացություններ» են և ունեն ընդհանրություններից զատ միայն իրենց բնորոշ հատկություններ. «**Աշխարհս գեղեցկագոյն է. զի զանազան են ստեղծածք.**

¹³ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, էջ 296:

¹⁴ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 138:

¹⁵ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 271:

և յայտնենք երկու կերպի: Մին՝ քնարն որ զանազան լարս ունի, թե՛ ամեն լարքն զոյգ էին, ոչ տային այնպէս գեղեցիկ ձայնս: Երկրորդ՝ ի յանդամոց մարմնոյս. զի թե՛ ոտն այնպէս պատուական էր որպէս ակն, գեղեցիկ էր ինքեան. բայց մարմնոյն ոչ էր բարւոք»¹⁶: Տաթևացին հակադրությունների առկայությունը դիտարկում է որպէս թե՛ գեղեցիկի, թե՛ ամբողջի և թե՛ ներդաշնակության պահպանման միջոց: Օրինակ, չարիքների արդարացման գեղագիտական-տիեզերաբանական փաստարկի համաձայն՝ ինչ-որ բան ինքնին, առանձին վերցրած կարող է չար թվալ, սակայն ամբողջի մեջ այդ չարը ընդհանուր ներդաշնակությունն ու գեղեցկությունը ապահովող տարրերից մեկն է: Նմանապէս, ինչ-որ բան կարող է ինքնին, առանձին վերցրած երևալ տգեղ, սակայն ընդհանուր պատկերի մեջ՝ գեղեցիկ: Օրինակ, սև գույնն ինքնին անգարդ է, սակայն պատշաճ տեղ զբաղեցնելով նկարի մեջ՝ երևում է «ազնիվ» և գեղեցիկ: «Այսպէս չարութիւն ինքն ըստ ինքեան աղտեղի է,- գրում է Տաթևացին,- յաշխարհիս ի պատշաճաւոր տեղի եղեալ, գեղեցիկ երևի աշխարհս»¹⁷: Կամ՝ չար գործերը ինքնին տգեղ են, սակայն գեղեցիկ են դրանց արժանի հատուցումները՝ **«տգեղութիւն չար գործոցն չար պատժօքն գեղեցկանայ»**¹⁸:

Տաթևացու կարծիքով՝ գեղեցիկը միաժամանակ իրերի նկատմամբ մարդու վերաբերմունքի և ընկալման արդյունք է: Մարդը ինչ-որ բան համարում է գեղեցիկ, որովհետև դրա ճանաչումն ու իմաստավորումը պատճառում են հաճույք կամ տալիս են օգուտ: Գեղեցիկն այն է, ինչ բավականություն և հաճույք է պատճառում մարդկանց: Հեղոնիստական այս մոտեցումը նշանակում է, որ օբյեկտիվ հատկություններից զատ գեղեցիկն ունի նաև սուբյեկտիվ երանգավորում, որը կապված է մարդու ճանաչողական և գնահատողական ունակությունների հետ: Տվյալ դեպքում իմացաբանականն ու արժեքաբանականը (գեղագիտականը) հանդես են գալիս միասնաբար: Իրերի ու երևույթների մասին իմացությունն անհրաժեշտ է, որպէսզի մարդիկ իրենց կարողությունների ու հմտությունների սահմաններում ստեղծագործեն՝ կերտելով թե՛ առաջին անհրաժեշտության իրեր և թե՛ արվեստի գործեր: Աստված մարդուն պարզեւ է բազում բարիքներ, այդ թվում՝ «ետ զբնական իմաստութիւնն» կամ՝ «զարդարեաց գնա տեսական եւ գործնական իմաստութեամբ», որոնք ունեն իրենց գործառնությունները. **«Գործնականն ոչ ունի զմտաց պայծառութիւն որով լուսաւորի և գեղեցկանայ. որպէս տեսականն իմաստութեան լուսովն: Այլ նա գործովն բարի է և գեղեցիկ, այլ մտօքն խաւար է և տգեղ»**¹⁹: Լինելով իմաստության ջատագով՝ Տաթևա-

¹⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ էջ 63:

¹⁷ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութան որ կոչի Ձմեռան հատոր, էջ 67:

¹⁸ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, էջ 37:

¹⁹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութան որ կոչի Ձմեռան հատոր, էջ 172: Տե՛ս նաև՝ Ս. Գրիգոր Տաթևացի, Սողոմոնի առակների մեկնությունը, Եր., 2000, էջ 141: Կեղծ

ցին կարծում է, որ իմաստության միջոցով մարդիկ երկրային նյութը «գեղեցկացուցանեն զանազան նկարիք և ճարտարութեամբ»²⁰:

Վերոնշյալ տիեզերական-բնագանցական հակադրությունների միջև ընթացող պայքարի կիզակետում մարդն է, որի բնությունը նույնպես կազմված է երկու հակադիր, իրարից արմատապես տարբերվող գոյացություններից՝ հոգուց և մարմնից, իսկ հոգին՝ բանական և անբան մասերից: Գեղագիտական տեսանկյունից մարդը արարված տիեզերքի ամենակատարյալ էակն է, աստվածային իմաստուն արարչագործության ամենագեղեցիկ հորինվածքը: Իբրև հոգու և մարմնի միասնություն՝ մարդը միջանկյալ դիրք է զբաղեցնում երկնային և երկրային, իմանալի և զգալի աշխարհների միջև՝ դառնալով դրանց շաղկապման հանգուցակետը: Փաստորեն, մարդու բնությունն այնպիսին է, որ դրանում խտացված առկա են երկնային և երկրային կեցության բոլոր շերտերը, երկնային և երկրային գեղեցկությունների տարրերը: Մարդը գեղեցիկ է, որովհետև ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ: Մարդը կատարյալ ու գեղեցիկ է նաև իր նպատակահարմար կառուցվածքով. մարմինը և հոգին իրենց մասերով ու անդամներով կազմում են մի ներդաշնակ ամբողջություն, որում յուրաքանչյուրը կատարում է իրեն վերապահված գործառույթը: Գեղեցիկի ընկալումը պայմանավորված է մարդու ֆիզիկական կառուցվածքով, ի մասնավորի՝ ուղղահասակությամբ: Մարդը, շնորհիվ իր ուղղաձև կազմվածքի, հիանում է երկրի և երկնքի գեղեցկությամբ, ճանաչում տեսանելի և աներևույթ գոյերը և դրանցից ստանում գեղագիտական ու ճանաչողական մեծ բավակա-նություն: Տաթևացու կարծիքով՝ արարված գոյերից միայն մարդուն է բնորոշ գեղեցիկի մասին պատկերացում ունենալը. «Կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ իսկ մարդն հեշտանայ առաել գեղեցկութեամբ զգալեացս յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր և ժողովէ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ...»²¹:

Տաթևացին, մարդուն համեմատելով կենդանական աշխարհի ներկայացուցիչների հետ, հընթացս ցույց է տալիս մարդու հոգեմարմնական բնության առավելությունների, մարդկային արվեստի և արհեստի ծագման պատճառը: Պատասխանելով այն հարցին, թե ի տարբերությ-

Դիոնիսիոս Արեոպագացու երկերի ազդեցության տակ գտնվող միջնադարյան մտածողների, այդ թվում Գրիգոր Տաթևացու ուսմունքներում կարևոր տեղ է զբաղեցնում «լուսի բնագանցությունը» (այդ մասին տե՛ս **Պիշկով Ա. Մ.** *Метафизика света. Очерки истории.* СПб., 2012; **Հ. Քյուսեյան**, Հայ միջնադարյան արվեստի աստվածաբանություն, Եր., 2021, էջ 103-142): Տվյալ դեպքում միջնադարյան խորհրդանշական-այլաբանական մտածելաոճի հանգույն Տաթևացին իմաստությունը նույնացնում է լուսի ու գեղեցիկի, իսկ տգիտությունը՝ խավարի ու տգեղի հետ և ընդգծում այն միտքը, որ ինչպես լուսն առավել է խավարից, այնպես էլ իմաստությունը՝ գերազանց է տգիտությունից: Իմաստությունը լույս է, իսկ տգիտությունը՝ խավար, որովհետև լույսը երևույթն է, գոյություն, իսկ խավարը՝ չգոյություն ու լուսի բացակայություն:

²⁰ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Չմեռան հատոր, էջ 156:

²¹ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 233:

յուն կենդանիների՝ ինչո՞ւ է մարդը ծնվում մերկ, թույլ, այսինքն՝ անզեն, Տաթևացին գրում է, որ նախ՝ եթե մարդը ունենար «զենքեր» ժանիքներ, ճիրաններ, սմբակներ և այլն, ապա կլիներ ոչ թե մարդակերպ, այլ գազանանման, երկրորդ՝ եթե ունենար բնական զենքեր ու զգեստներ, ապա «ոչ կարօտեր այլոց կենդանեաց, այլ և ոչ խնամեր գնոսա»։ Մարդը այդ բնական զենքերի կարիքը չի զգում, որովհետև ինքն ի վիճակի է **«ի ձեռն արուեստից»** պատրաստել ավելի հզոր զենքեր, և դրանք գործադրել անհրաժեշտության դեպքում ինչպես կենդանիների, այնպես էլ թշնամիների դեմ. «Արար զմեզ կարօտս և մերկս ի բնական զգեստուց և զինուց և կերակրոց և տանց բնակութեանց, զի ետ մեզ բան և իմաստութիւն որ **արուեստիւ հնարիմք և գտանեմք** զպակասութիւն մեր. թե՛ զգեստ է, թե՛ զէնք, թե՛ կերակուր, թե՛ բնակութիւն և այլն ամենայն»²²: Այլ խոսքով՝ իր խելքի, շնորհքի, իմաստության ու հնարամտության շնորհիվ մարդը լրացնում է բնական պակասությունները և իր ստեղծած բազմազան գործիքների ու զենքերի միջոցով ապահովում իր գոյության անվտանգությունը: Մարդը ստեղծագործող, գործիքներ պատրաստող էակ է, ուստի **«մարդոյս միայն է հնարագէտ գործք և արուեստք զանազան»**²³:

Միջնադարում տարածված ավանդույթի համաձայն՝ Տաթևացին հիմնականում սկզբունքային տարբերություն չի տեսնում արվեստի և արհեստի միջև: Նույնացնելով դրանք՝ նա իմաստություն է համարում այն արհեստները, որոնց առարկան երկրային նյութերն են, իսկ իմացման գործիքները՝ ձեռքերն ու մատները: Կարծելով, որ «արուեստն անգրկելի ապրանք է մարդոյն ի յայս կեանս», նա, կարևորելով արհեստների կենսական նշանակությունը, ծնողների պարտականություններից է համարում իրենց զավակներին սովորեցնելու կամ սովորեցնել տալու որևէ արհեստ՝ «զի արուեստիւն մուքս և ստացուածս կարէ գտանել»²⁴: Իսկ երբ արվեստի ու արհեստի միջև նա տեսնում է տարբերություն, ապա «արուեստ» է համարում տեսական կամ մտքի ու խոսքի մասին գիտությունները (թերևս «ետյակ» գիտությունները՝ քերականություն, ճարտասանություն և տրամաբանություն), իսկ «արուհեստ»՝ արհեստագործությունը. «Վարդապետք զլուխ են աշակերտաց իւրեանց. զի նոքա առաջնորդ են և ուսուցանեն տգիտաց. թէ **զարուեստս բանից, և թէ զարուհեստս ձեռաց** իւրեանց, և բերեն ի կատարումն: Եւ այն որ բանից վարդապետն է՝ բանիւ ընդ լրսելիսն զիմացական միտս նոցա ուսուցանէ և վարժէ. և որ գործոց վարդապետն է՝ ձեռօք ընդ աչսն զզգայականս նոցա վարժէ և կրթէ»²⁵: Շարունակելով այս միտքը՝ Տաթևացին գրում է, թե խելամիտ է այն աշակերտը, որը կարողանում է տիրապետել թե՛ մտքի արվեստին և թե՛ ձեռքի արհեստին, ընդ որում՝ ոչ թե պարզապես կրկնօրինակելով վարդապետին, այլ ստեղծագործելով. «Եւ ոչ միայն գոր տեսանէ և լսէ ի նմանէ՝ զայն ուսանի. այլև

²² **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզության որ կոչի Ամառան հատոր, էջ 254:

²³ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 275:

²⁴ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, էջ 454:

²⁵ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, էջ 195:

զներքին շարժումն սրտին, և գորպիսութիւն կամացն պարտ է գտանել, և հետևիլ իմաստնոց, և ա յնպէս լինի և ինքն իմաստուն»²⁶:

Գրիգոր Տաթևացու մտածումներում բնագանցական խորհրդապաշտությունն ու համընդհանուր այլաբանությունը իրարից անգատելի են, ինչը նշանակում է, որ գեղագիտականն առհասարակ, ի մասնավորի գեղեցիկի ընկալումը, սերտորեն կապված են բարոյագիտական ոլորտի, բարոյական գիտակցության հետ: Նա բարին նույնացնում է գեղեցիկի հետ, իսկ չարը՝ տգեղի ու այլանդակի: Այն, ինչ բարի է, նաև գեղեցիկ է, իսկ ինչ չար է՝ տգեղ ու այլանդակ: Գեղեցիկը տարբերվում է բարուց այն բանով, որ հաճույքի ու բավականության առարկա է, իսկ բարին մարդկային կյանքի նպատակն ու իմաստն է: Եթե մարդը առողջ է, անմեղ ու մաքուր հոգով և մարմնով, այսինքն՝ Աստծո պատկերն ունի անարատությամբ, ապա գեղեցիկ է, իսկ եթե խրված է մեղքերի մեջ, ապա ատելի է, գարշելի թե՛ Աստծո, թե՛ հրեշտակների և թե՛ մարդկանց համար: Բարոյական առաքինությունները զարդարում/գեղեցկացնում են մարդու հոգին՝ «մեզ զգեստ է չորս առաքինութիւն (խոհեմությունը, արիությունը, ողջախոհությունը և արդարությունը - Ս. Չ.) հոգւոյ ի մէնջ գեղեցկացեալ»²⁷: Տաթևացին գեղեցիկը փնտրում և տեսնում է բարոյական տեսանկյունից գովելի գործողությունների մեջ: Օրինակ, «գործութիւնն գեղեցիկ վաստակաւոր է», որի ամենակարևոր «պտուղը» հետևյալն է՝ «ողորմութիւնն սայիտակ է և գեղեցիկ և պայծառ. զի որպէս խարտոցն զերկաթի ժանկն սրբէ և պայծառացուցանէ. նոյնպէս գողորմութիւնն ի վիշտս պայծառացուցանէ զհոգիս տուղին և առնողին»²⁸: Անշուշտ, դա չի նշանակում, թե ամեն մի գեղեցիկ ինքնին օգտակար է կամ բարոյական: Օրինակ, Տաթևացին քաղաքի անդորրը խանգարողներից է համարում նաև «գեղեցիկ բոզք պոռնկանցի»²⁹, որոնք թեն անբարոյական են (հոգով ապականված են), բայց երևի մարմնապէս գեղեցիկ են: Նմանապէս մարդը ստեղծում կամ օգտագործում է բազմաթիվ գեղեցիկ իրեր, որոնք առաջնային անհրաժեշտության չեն, սակայն որոշ առումով պիտանի են: Տարբերակելով անհրաժեշտ և ոչ անհրաժեշտ՝ վայելչական, պահանջմունքները՝ Տաթևացին վայելչականի առթիվ մի կողմից նշում է, որ «վայելչականն այն է՝ որ թէ լինի՝ ոչ կենդանացուցանէ զմարդն. և թէ ոչ լինի՝ ոչ մեռանի. որպէս արծաթն. ոսկին. ակն. մարգարիտն և այլն. զի աւելորդ են ի մարդկային կեանս՝ և ընդունայն և ի նանիր»: Իսկ մյուս կողմից պարզվում է, որ դրանք այնքան էլ անպիտանի չեն՝ «յորքան հարկաւոր պէտքն լնանին, ապա նոքա ցանկալի լինին ի զարդարանս վայելչութեան»³⁰:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, էջ 64:

²⁸ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Չմեռան հատոր, էջ 345:

²⁹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, էջ 588:

³⁰ Նույն տեղում, էջ 258:

Առհասարակ միջնադարում աշխարհի գեղագիտական և մասնավորապես երկրային գեղեցկության ընկալումը սերտորեն կապված է մարդու կյանքի իմաստի, աշխարհում նրա գտնվելու նպատակի հետ: Աշխարհի նկատմամբ քրիստոնեական մարդաբանության ելակետային դիրքորոշումը արհամարհանքն ու ատելությունն է առ երկրայինը և աշխարհիկը, որովհետև վերջիններս մարդուն շեղում են փրկության տանող ճիշտ ճանապարհից, խանգարում են ճիշտ հասկանալու մարդու կեցության իմաստն ու նպատակը: Այս աշխարհը մարդու համար ժամանակավոր հանգրվան է, արքորավայր, բանտ, «լացի հովիտ», ուստի մարդը պետք է ճանապարհորդի պես վերաբերվի աշխարհիկ բարիքներին ու վայելքներին: Մարդու կեցության նպատակն իր հոգու գեղեցկության վերականգնման, այսինքն՝ հոգու մաքրագործման միջոցով փրկության տանող ճանապարհի ընտրությունն է: Ուստի մարդը երկրային աշխարհում պետք է ապրի ոչ թե գանձ կուտակողի, այլ հեռավոր նպատակ ունեցող ճանապարհորդի հոգեբանությամբ, ով գիտի, որ «տեղ» ունի գնալու և անկախ ամեն ինչից՝ ո՛չ հաճույքներից է գայթակղվում և ո՛չ էլ դժվարություններից՝ կարկամում ու սայթաքում, այլ դրանք թողնելով՝ շարունակում է իր ճանապարհը: «Մեղսագործություն-փրկություն» հարացույցի համաձայն՝ այն ամենը, ինչ նպաստում է փրկության գործին, գեղեցիկ է ու օգտակար, իսկ ինչ խանգարում է՝ տգեղ է ու այլանդակ, վնասակար ու անպիտան: Որքան էլ միջնադարյան մտածողները բարձր գնահատեն աստվածային գեղեցկությունը, առավելությունը տան հոգևոր բնույթի գեղեցիկ երևույթներին, դա դեռ չի նշանակում, թե նրանք անտարբեր են երկրային, զգայական գեղեցկությունների նկատմամբ: Ավելի ստույգ՝ մի կողմից նրանք պարտավոր են ատել ու արհամարհել երկրային գեղեցկությունները՝ որպես մեղքի, մարդուն «արքունական ճանապարհից» շեղող գործոններ, սակայն մյուս կողմից՝ քանի որ արարված աշխարհը, իբրև Գերագույն Արվեստագետի ստեղծագործություն, օբյեկտիվորեն գեղեցիկ է, ուստի այն արժանի է հիացական գնահատանքի: Այս տեսանկյունից նրանք մեղք են համարում ոչ թե երկրային-զգայական գեղեցկություններով հիանալը³¹, այլ դրանց «գերին» դառնալը, դրանց պատճառով հոգևոր

³¹ Մասնագիտական գրականության մեջ տարածված է այն տեսակետը, թե իբր միջնադարի մարդիկ զուրկ էին բնության նկատմամբ գեղագիտական զգացումից և չգիտեին ինչպես հիանալ դրանով, քանի որ բնությունը չի եղել նրանց հայեցումների առարկան: Այդ կապակցությամբ մեջբերում են նշանավոր միստիկ Բեռնարդ Կլերվոլացու (1091-1153) դեպքը, ով ողջ օրը ժնկի լճի երկայնքով շրջագայելիս այնքան էր խորասուզված Աստծո մասին խորհրդածությունների մեջ, որ չի նկատել այդ գեղատեսիլ լիճը: Այնուամենայնիվ, իրավացիորեն նկատում է Ա. Գուրկիչը, Բեռնարդի օրինակը համոզիչ չէ, քանի որ անհնար է դատել դարաշրջանի սովորական մարդու մասին այս մոլեռանդ հավատացյալի և աշխարհը մերժող կրքոտ քարոզչի միջոցով: Որքան էլ ազդեցիկ լինեին Բերնարդը և մյուս ճգնավորներն ու եկեղեցական բարեփոխիչները, նրանք չէին կարող որոշել միջնադարում բնության նկատմամբ գերիշխող վերաբերմունքը: «Միջնադարը դիտել որպես զգայական գեղեցիկի բարոյախոսական ժխտման դարաշրջան նշանակում

գեղեցկություններից հրաժարվելը: Երկրային/բնական գեղեցկությունների և մարդկային ստեղծագործության արդյունքների անվերապահ պաշտամունքը ճանապարհ է բացում թե՛ մոլորությունների և թե՛ մեղքերի համար: Բացահայտելով բազմաստվածության իմացաբանական արմատները՝ Տաթևացին նշում է, որ հեթանոսները, զմայլված արհեստների կամ արարածների գեղեցկությամբ, կարծեցին դրանք աստվածներ են: Նմանապես խաբվեցին երկնքի լուսատուների գեղեցկությամբ՝ նման այն շինականին, որ թագավորին չտեսնելով՝ թագավոր է կարծում նրան, ում զարդարված է տեսնում:

Աստված աշխարհն ստեղծել է գեղեցիկ, բարի, կատարյալ, օգտակար, բայց աշխարհն իր բոլոր բարեմասնություններով հանդերձ՝ անցողիկ և անարժեք է աստվածայինի ու հավիտենական կյանքի համեմատությամբ: Տաթևացու կարծիքով՝ աշխարհի և դրանում գտնվող իրերի գեղեցկության անցողիկությունը խորհրդանշական է: Եթե աշխարհի իրերը, երևույթները և արարածները ստեղծված լինեին անապական, ապա «մարդկային սիրտս ի սոսա առաւել կապեալ լինէր և հեռանայր յԱրարչէն»: Այս կապակցությամբ մեջբերելով եկեղեցու վարդապետների խոսքը՝ Տաթևացին գրում է. «Ո՞վ աղտեղի աշխարհ, այժմ որ այնպես ապականացու և անցաւոր ես, զքեզ սիրեմք, թէ մնացական և անանցաւոր էիր, ապա զի՞նչ առնէաք»³²: Որքան էլ միջնադարյան մտածողը հիանար երկրային գեղեցկություններով, այդուհանդերձ նա դրանք կապում է մեղքերի հետ, իսկ դրանցից չափից դուրս հաճույք ու բավականություն ստանալը համարում է անթոյլատրելի: Քանի որ երկրային գեղեցկությունները անցողիկ են, ուստի մարդը պետք է իր հայացքը անեռի անանցողիկ ներքին, հոգևոր գեղեցկության վրա:

Այսպիսով, Գրիգոր Տաթևացու գեղեցիկի, արվեստի և ստեղծագործության վերաբերյալ պատկերացումները դուրս չեն գալիս միջնադարում տիրապետող աստվածաբանական-եկեղեցական գեղագիտության շրջանակներից: Իսկ այդ գեղագիտական հարացույցը թեև գեղե-

է ոչ միայն միջնադարյան տեքստերի մակերեսային իմացություն, այլև միջնադարյան մտածելակերպի լիակատար չիմացություն: Օրինակը, որը կօգնի պարզաբանել իրավիճակը, գեղեցկության ընկալումն է խորհրդագրացների (միստիկների) և խստապահանջների (ոչգործատների) կողմից: Որտեղ էլ որ ապրեին, բարոյախոսներն ու ճգնավորները բնավ անտարբեր չէին երկրային ուրախությունների նկատմամբ, ընդհակառակը, նրանք մյուսների համեմատ ավելի շատ էին փափագում դրանց, և հենց երկրայինի նկատմամբ զգայունության և գերբնականին ձգտելու հակադրության մեջ է դրսևորվում ճգնավորական գործի դրաման: Երբ այս գործունեությունը հասնում է իր նպատակին, խորհրդագրացն ու ճգնավորը, հանգստանալով և լիովին կառավարելով իրենց զգացմունքները, հնարավորություն էին ստանում պարզ աչքով նայելու աշխարհիկ ամեն ինչին և գնահատելու դա այն ներողամտությամբ, որը թույլ չի տվել նրանց ճգնավորական պայքարը: Միջնադարյան խստությունն ու միստիկական մեզ տալիս են այս երկու հոգեբանական դիրքորոշման վերաբերյալ բազմաթիվ օրինակներ և միևնույն ժամանակ մի շարք հետաքրքիր վկայություններ այն ժամանակվա գեղագիտական աշխարհայացքի մասին» (Умберто Э. Искусство и красота в средневековой эстетике. СПб.: Алетея, 2003, с. 7):

³² Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 64:

ցիկը և ճշմարիտ ստեղծագործությունը տեսնում է աստվածային աշխարհում և հոգևոր ոլորտում, այնուհանդերձ դրանց իմացումը և գեղագիտական ընկալումն սկսում է երկրային-նյութական իրերի ու երկվայրյանից, այսինքն՝ աստվածայինից ու հոգևորից զատ՝ կարևորում է երկրային գեղեցկությունների և մարդկային արվեստի ու արհեստի արդյունքների լուսաբանման նշանակությունը:

СЕЙРАН ЗАКАРЯН – *Эстетические взгляды Григора Татеваци.* – В статье анализируются эстетические воззрения видного богослова-философа Татевского университета святого Григора Татеваци (1346-1409) в контексте его богословско-метафизических, гносеологических, антропологических и этических представлений. Эстетические взгляды Татеваци, в частности, его учение о красоте, искусстве, ремесле, божественном и человеческом творчестве базируются на принципах религиозно-богословского мировоззрения (монотеизм, креационизм, превосходство духовного над материально-чувственной сферой, символизм, иносказание и др.) и согласующихся с ними или адаптированных к ним философских идеях. Эстетические воззрения Татеваци имеют синтетический характер, что обусловлено характерным для средневекового мышления принципом недифференцированности сфер духовной деятельности. Он различает сверхъестественную/божественную и природную/человеческую красоту, разные степени красоты в сотворенном мире, ценит и иносказательно истолковывает земные красоты, приписывает красоте такие взаимосвязанные и взаимодополняющие свойства, как совершенство, умеренность, пропорция, чистота (блеск, цвет, свет), гармония и целостность. Помимо объективных качеств, прекрасное имеет и субъективную окраску, которая связана с познавательными и оценочными способностями человека. У Татеваци восприятие красоты тесно связано с этическими представлениями о добре и зле, прекрасном и безобразном, смысле и цели жизни человека. Он отождествляет добро с прекрасным, а зло с безобразным. В целом Татеваци поддерживает эстетическую теорию, согласно которой, хотя прекрасное и истинное творение находится в божественном мире и духовном царстве, однако, параллельно с духовными красотами, ценятся красоты и земные, а также результаты человеческого искусства и ремесла.

Ключевые слова: *Григор Татеваци, средневековое мировоззрение, символизм, аллегория, эстетика, прекрасное, объективные и субъективные свойства прекрасного, искусство и ремесло, творчество*

SEYRAN ZAKARYAN – *The Aesthetic Views of Grigor Tatevatsi.* – The article analyzes the aesthetic views of Saint Grigor Tatevatsi (1346-1409), a famous theologian-philosopher of Tatev University, in the context of his theological-metaphysical, epistemological, anthropological and moral understandings. Tatevatsi's aesthetic views, teaching about beauty, art, craft, divine and human creation are based on the principles of the religious-theological worldview (monotheism, creationism, superiority of the spiritual over the material-sensual sphere, symbolism, allegory etc.) and philosophical understandings consistent with them or adapted to them. Tatevatsi's aesthetic views have a synthetically nature, which is due to the principle of non-differentiation of the spheres of spiritual activity characteristic of medieval thinking. He distinguishes supernatural/divine and natural/human beauties, different degrees of beauty in the created world, values and allegorically interprets earthly beauties, ascribes beauty to objective, interconnected and complementary properties: perfection, moderation, proportion, pu-

rity (shine, color, light), harmony and integrity. Apart from the objective qualities, the beautiful also has a subjective coloring, which is related to the cognitive and evaluation abilities of a person. Tatevatsi's perception of beauty is closely related to moral understandings of good and evil, beautiful and ugly, the meaning and purpose of human life. He identifies the good with the beautiful and the evil with the ugly. In general, Tatevatsi supports the aesthetic theory according to which, although the beautiful and true creation is in the divine world and the spiritual sphere, earthly beauties and human art and craft are valued along with spiritual beauties.

Key words: *Grigor Tatevatsi, medieval worldview, symbolism, allegory, aesthetics, beautiful, objective and subjective properties of beautiful, art and craft, creativity*

ԲԵՄԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ

ՕՎՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

**Այնպես, ինչպես դերասանները շփոթմունքը թաքցնելու համար
դիմակ են կրում, այնպես էլ ես մտադրվել եմ այս աշխարհի
թատերաբեմում, որտեղ մինչ այժմ եղել եմ սոսկ հանդիսատես,
ասպարեզ իջնել դիմակով:
*Ռ. Դեկարտ***

Ժամանակակից «արագ ժամանակների» աշխարհում տեղի ունեցող իրադարձություններն ասես խաթարել են ժամանակի օբյեկտիվ զգացողությունը: Սոցիալ-մշակութային արմատական որոշ փոխակերպումներ ոչ միայն արժեզրկում են կյանքի կազմակերպման ու կանոնակարգման երբեմնի սովորույթների, ավանդույթների ու բարոյական նորմերի դերն ու նշանակությունը, այլև ջլատում ու աղճատում սոցիալական ամբողջականությունը: Ըստ էության մարդկությունը այլևս ապրում է մի աշխարհում, որը օբյեկտիվ, սուբյեկտիվ, վիրտուալ և պատրանքային իրականությունների մի յուրօրինակ խառնատեղում (սիմբիոզ) է, և որտեղ ավանդական կազմակերպված հասարակության մարդը աննկատ վերածվում է սոցիալական զանազան բեմականացումների մարդ-դեկորի, որը յուրաքանչյուր արարում պարտավոր է իրեն վերագրված դերին համապատասխան դիմակ կրել:

Գոյաբանական առումով թերևս դժվար է մարդուն տարբերել իր դիմակից, քանի որ այն ձևավորվում է մարդկային անհատականության սոցիալականացմանը զուգընթաց: Վերջիվերջո, անհատը անձ է դառնում այն ժամանակ, երբ յուրացնում է սովյալ հասարակության կյանքի կազմակերպման մշակույթով նախատեսված որոշակի սոցիալական դերեր և դրանց համապատասխան սոցիալական դիմակներ: Այս տեսակետից կարելի է ասել, որ սոցիալական դերն ու համապատասխան դիմակը ոչ միայն հստակ ուրվագծում են մարդկային կյանքին մշտապես ուղեկից թվացյալի, ձևականի և իրականի սահմանները, ինչը ինքնաընկալման կարևոր պայման է, այլև կատարում են մարդու ներաշխարհն արտաքին աշխարհի հետ կամրջողի դեր: Արդյունքում, ինչպես ասում են, ցանկացած դեմք դառնում է ազատորեն ընտրված դիմակ, իսկ դիմակը՝ հանրային դեմք:

Բանալի բառեր - բեմականացված հասարակություն, վիրտուալ իրականություն, դեմք, դեր, դիմակ, սոցիալական խաղ, դերային վարք

Սոցիալական կեցության իմաստն ու բովանդակությունը ածանցյալ են կյանքի կազմակերպման ու կանոնակարգման մշակութային

այն համատեքստից, որի շրջանակներում զարգանում են մարդկային ամենօրյա փոխհարաբերությունները: Կարելի է ասել, որ կյանքի մշակույթը հանրային կյանքի բեմականացման և համակեցության կազմակերպման մի ինքնատիպ բեմագրություն է (սցենար), որտեղ մարդն իր կյանքի դրամայի «դերասանն» ու «հանդիսատեսն» է միաժամանակ: Երկու դեպքում էլ մարդը «խաղում» է, և նրա իսկությունը, պատկերավոր ասած, քողարկված է ինքնակամ ստանձնած կամ պարտադրված դիմակով: Այս իմաստով կարելի է ասել, որ մարդկային հասարակության ձևավորումից ի վեր սոցիալական դերն ու դրան համապատասխան սոցիալական դիմակը մարդու սոցիոմշակութային կերպարի դրսևորման միակ եղանակն են, և հանրային կյանքում ճանաչված ու գնահատված լինելու համար մղվող պայքարը, ըստ էության, պայքար է հանուն դերի ու դիմակի¹: Դիմակն ասես ծուռ հայելի լինի, որի մեջ մարդը հայում է սոսկ իր սոցիալական արտացոլանքը:

Մակայն դիմակը ոչ միայն սոցիալական, այլև մշակութային հայելի է, որի օգնությամբ կարելի է բացահայտել տվյալ պատմական ժամանակի և տվյալ հասարակության խորքային էությունը: Իբրև մշակութային տարր դեռևս հին ժամանակներից դիմակը բնության ուժերի, գերբնականի, մոգության և այլնի խորհրդանիշ է, ազգային ծեսերի և խաղերի անփոխարինելի ատրիբուտ: Ծեսի դիմակն ավելին է, քան սեփական դեմքը, քանի որ ոչ միայն դիմակ կրողի անհատականությունն է ընդգծում, այլև հավերժության խորհրդանիշ է՝ փաստելով, որ մարդու դեմքը մշտապես կարող է փոխվել, մինչդեռ դիմակն ավարտուն է և ամբողջական: Եթե դեմքը որոշակի է և ունի իր պատմությունը, ապա դիմակը պատմությունից գտված մաքուր «մարմին» է:

Ինչպես արդեն նշեցինք, սոցիալական դերի ու դիմակի հիմնահարցի առաջին հայեցակարգերը ձևավորվել են դեռևս անտիկ աշխարհի փիլիսոփաների կողմից, ովքեր հասարակությունը նմանեցնում էին թատրոնի: Նման մոտեցման պատճառներից մեկն այն էր, որ հին աշխարհում արդեն կարևորվում էին պատրանքի և մոլորության, սոցիալական դերի և սոցիալական դիմակի, մարդկային էության, անհատականության և սոցիալական վարքագծի տարանջատման հարցերը: Պլատոնը, օրինակ, մարդկային կյանքը դիտարկում էր իբրև տիկնիկային մի ներկայացում, որտեղ խաղում էին աստվածները, և որտեղ մարդը փորձում էր դառնալ «անձնավորություն» (persona)², կռվել աստվածների և ճակատագրի դեմ, մեղանչել և խախտել պատվիրաններ, բայց և հասկանում էր, որ, այնուամենայնիվ, չի կարող լիովին խուսափել ճակատագրից, իրեն վեր դասել աստվածներից և մնալ անպատիժ: «Մենք՝ կենդանի էակներս, աստվածների հիասքանչ տիկնիկներ ենք՝

¹ Տե՛ս Агамбмен Дж. Harota. M., 2014, էջ 79:

² Լատ. «Persona» (մարդ, անձ, անձնավորություն) նախնական իմաստով նշանակել է դիմակ, որը կրում էր դերասանը հին հունական թատրոնում:

նրանց կողմից պատրաստված կա՛մ զվարճության, կա՛մ լուրջ նպատակների համար: Իսկ մեր ներքին վիճակները նման են կոշիկի կապիչների կամ թելերի, որոնցից ամեն մեկը մեզ տանում է իր ուղղությամբ, և քանի որ դրանք հակառակ ուղղություններ են, ապա մեզ մղում են հակադիր գործողությունների»³: Հին ու բարի այն ժամանակներում ոչ թե աշխարհը գոյություն ուներ հանուն մարդու, այլ մարդը՝ հանուն աշխարհի, և, հետևաբար, նրա ազատությունը սահմանափակ էր, ավելի շուտ՝ նա ընդհանրապես ազատություն չուներ, իսկ նրա «անձը» միայն «դիմակ» էր, գոյաբանական բովանդակությունից զուրկ մի բան, որը ոչ մի կապ չուներ իր իսկական էության հետ:

Չմանրամասնելով հիմնախնդրի պատմամշակութային ողջ դրվածքը և հայեցակարգերից յուրաքանչյուրի առանձնահատկությունները նկատենք միայն, որ սոցիալական կյանքի բեմականացված լինելու փաստը գրեթե բոլոր ժամանակների մտածողների կողմից ընդունվում է որպես սոցիալականության կազմակերպման և ինքնադրսևորման համընդգրկուն եղանակ, քանի որ մարդու կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ փոխկապակցված դերերի հավաքածու: Ինչպես իրավացիորեն նկատում է Գի Դեբորը, «բեմադրությունը հասարակության մեջ գերակշռող կենսաձևի մոդել է»⁴: Ընդ որում, այդ կենսաձևում մեր դերն ու դիմակը, այլ կերպ ասած՝ մեր դերասանական «Ես»-ը, մարմնավորում է մեր մտատիպարը, այն կերպը, որը համահունչ է ժամանակի պահանջներին և հանրային ընկալումներին:

Ավելին, ժամանակակից աշխարհում թատերականցումը դարձել է մարդու գործունեական կեցության կարևորագույն բաղադրիչներից մեկը, քանի որ հասարակական կյանքի ցանկացած ոլորտ բեմականացվում է՝ վերածվելով կեղծակերպի գործառության յուրահատուկ տիրույթի: Ինքնին հասկանալի է, որ սոցիալականության նման այլակերպման պարագայում մարդու ընտրության հնարավորությունները խիստ սահմանափակ են, քանի որ նա սոցիալական այդ դրամայում կարող է լինել կա՛մ այդ մեծ խաղի կրավորական հանդիսատեսը, կա՛մ էլ՝ ակտիվ մասնակիցը: Էլ չասած, որ ժամանակակից սպառողական հասարակությունը ինչ-որ իմաստով հենց «խաղացող» և «հանդիսատես» մարդկանց հասարակություն է, որտեղ նա ներկայացվելու և ինքն իրեն ներկայացնելու գործողություններով իմաստավորում է սեփական կյանքը, միահյուսում իրականն ու վիրտուալը, իսկականն ու հորինվածը վերածում դիմակահանդեսի:

Այս առնչությամբ Ժ. Բոդրիարը իրավացիորեն նկատում է, որ սոցիալական խաղը բացակայող փոխադարձության սիմուլյացիայի հսկայական մոդել է, որին բնորոշ է ոչ թե գաղտնիությունը, այլ գործառութա-

³ Платон. Законы // Платон. Соч.: в 4 т., Т. 4, М., 1994, с. 93.

⁴ Дебор Г. Общество спектакля. М., 2020, с. 32.

յին սիմուլյացիան⁵: Մարդիկ ոչ թե ինքնաբար են շփվում, այլ զբաղված են ծառայությունների փոխանակմամբ: Նման պայմաններում հասարակության մեջ ապրելու և «սոցիալական նյութափոխանակությունը» իրականացնելու կարողությունները դառնում են անհատականության կարևոր հատկանիշները: Ի դեպ, արդի քաղաքակրթությունը էապես ընդլայնել է դիմակի գործածության սահմանները: Այն լայնորեն կիրառվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, և ինչ-որ իմաստով նույնիսկ «պետությունն ինքը մի վիթխարի դիմակ է և դիմադրում է, որ իր ներսում գոյություն ունենան բազմաթիվ առանձին դիմակներ»⁶:

Եվ իրոք, ժամանակակից կյանքը մարդուն դրել է այնպիսի զանազանակերպ իրավիճակների մեջ, երբ նա ստիպված է անընդհատ փոխել իր սոցիալական դերն ու դիմակը, արտաքինն ու վարքագիծը, որպեսզի կարողանա հարմարվել ու համակերպվել կյանքի մշտափոփոխ պայմաններին: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ աշխարհն իրենով անող, կյանքի իր ուղին սեփական ջանքերով հարթող և սոցիալական բեմում իր տեղն ու դերը որոշող, վիճարկող ու բանական «ֆաուստյան մարդու» փոխարեն կյանքի բեմում հաջողակն ու ընթրիինակելին այլևս «ճարպիկ մարդն» է: Անհերքելի է, որ մեր ժամանակներում լինել սոցիալապես ակտիվ նշանակում է լինել ներկայացված, տեսանելի, ունենալ և կարողանալ իրականացնել որոշակի սցենար՝ հետևելով պատրաստի, հաստատված կարծրատիպերի ու կարծիքների: Բայց հենց այն պատճառով, որ ներկայացված ու առավել ևս ներկայանալի լինելու համար ժամանակակից մարդուց պահանջվում է սոցիալական հանդիսատեսի առջև մշտապես հանդես գալ ու խաղալ նրան, ով ամենևին էլ ինքը չէ, նշանակում է, որ հանրային կյանքում նա այլևս անհատական հատկանիշներից զուրկ, իսկությունը դիմակի տակ քողարկված կերպար է, ոմն մեկը, ով ինքն իր «ուրիշն» է: Հարկ է նկատել, սակայն, որ սոցիալական այս դրամայում դիմակավոր լինելը զուտ մարդկային քնահաճույք չէ: Խնդիրն այն է, որ մարդը, պատկերավոր ասած, սոցիալական դերերի մի կծիկ է, որոնցից յուրաքանչյուրը խաղի իր կանոններն է թելադրում և, հետևաբար, պարտադրում վարքի հարկադրական ինչ-ինչ կաղապարներ ու սահմանափակումներ, որոնց հետ, հնարավոր է, դերակատարը ունենա ներքին անհաշտություն: Նման պարագայում դիմակը երկակի դեր է կատարում. մի դեպքում՝ ինքնաարդարացնողի (ես նա չեմ, ում ներկայացնում եմ), մեկ այլ դեպքում՝ կարգի հանդեպ իր անհաշտությունը քողարկողի (ես նա եմ, ում ուզում էիք՝ ներկայացնեմ): Յունգը այս կապակցությամբ նկատում է, որ շատ հաճախ մարդը «մի դիմակ է կրում, որը, իր գիտենալով, մի կողմից համապատասխանում է իր սեփական մտադրություններին, մյուս կողմից՝ իր միջավայրի հավակնություններին ու կարծիքներին»⁷:

⁵ Տե՛ս **Бодрийяр Ж.** Общество потребления. М., 2020, էջ 256:

⁶ **Կորն Աբե,** Ուրիշի դեմքը // Երեք վեպ, Եր., 1985, էջ 330:

⁷ **Юнг К.** Психологические типы. Минск, 2017, с. 449.

Ի դեպ, դեմքի ու դիմակի անհամապատասխանությունն ու ներքին անհաշտությունը կարող են հուզական ծանր ապրումներ հարուցել և դառնալ ներքին խռովքի պատճառ: Խնդիրն այն է, որ դիմակի հաջողություններն ու նվաճումները ինչ-որ իմաստով փաստում և հուշում են, որ կյանքում մեր ուրիշը՝ դիմակը, ավելի հաջողակ ու արժանավոր մեկն է, քան այն իսկությունը՝ դեմքը, որի անհատականության ու ինքնատիպության հանդեպ ծածուկ մի ակնածանք ունենք մշտապես: Դեմքի ու դիմակի անհամապատասխանությունն ու անհաշտությունը գոյաբանական խնդիր են, և մենք, ըստ էության, պարտավոր ենք համակերպվել այն իրողությանը, որ սոցիալական այս ներկայացման մեջ դիմակը վաստակել է իր համար նախատեսված կյանքով ապրելու իրավունք, իսկ այն կրող դեմքը երբեմն ստիպված է ծամաձուլվել, բայց համակերպվել դիմակի «խաղի» անհարմարություններին: Այսպիսով, սանձահարելով և հաղթահարելով սեփական «Ես»-ի իրական պահանջներն ու ձգտումները, սոցիալական կյանքում մարդը մի կողմից պարտավոր է «դիմակավորվել» իրեն տրված կամ ինքնակամ ընդունած սոցիալական այս կամ այն դերին համապատասխան, որպեսզի ձուլվի հանրությանը, ընդունվի մեծամասնության կողմից և ապրի կյանքի կազմակերպման ու կանոնակարգման տվյալ մշակույթի համատեքստում, մյուս կողմից՝ այդկերպ հնարավորություն ստանա առանձնանալու ամբոխից, գերազանցելու ինքն իրեն և նույնիսկ վերաստեղծվելու կամ վերածնվելու: Մա գուցե այն պատճառով, որ դիմակը միաժամանակ և՛ սահմանագծման, և՛ սահմանանցման գործառույթ կատարելու հատկություն ունի: Այն մի կողմից մարդուն սահմանազատում է մյուսներից, մյուս կողմից՝ համահարթում անհատականություններն ու մարդկանց առերևույթ նույնացնում: Բացի այդ, դիմակը, որպես կանոն, հակված է իրեն միայնացնել իրենով քողարկված դեմքից, ինչի պատճառով դեմքի ու դիմակի միջև ներքին անհաշտությունը կարող է գոյութենական երանգներ ստանալ: Սահմանային մի իրավիճակ, երբ մարդը կա՛մ լիովին անձնատուր է լինում սոցիալական դերի պահանջներին ու խաղի կանոններին և վերաճում ինքնությունից գուրկ կամակատարի, կա՛մ էլ առաջադրում է խաղի իր կանոններն ու աստիճանաբար դերն անձնավորում և իրենով է անում: Ի դեպ, եթե առաջին դեպքում մարդու սոցիալական կարգավիճակը ամբողջովին ածանցյալ է սոցիալական դերից, ապա երկրորդ դեպքում սոցիալական դերի կարգավիճակը, նշանակությունն ու կարևորությունը ածանցյալ են այն կատարող մարդու կամային որակներից: Այսինքն՝ դիմակի ուժը մարդու արտաքին և ներքին մարտահրավերների առջև ցուցաբերած թուլությունն է: Իրականում մեր «Ես»-ի և նրա արտաքին քողարկումների (դիմակների) միջև հարաբերությունները մշտապես խառնակ են: Մեր դիմակները ամբողջապես օտար չեն մեզ, նրանք միշտ էլ պարունակում են որոշակի ճշմարտություն մեր մասին և այդքանով մեր դեմքի բանալին են:

Նոր և նորագույն ժամանակներում դիմակի ու դեմքի փոխհարաբերության ու փոխառնչությունների հարցի իմաստավորման համատեքստը էապես փոխվեց, քանի որ կյանքը ներկայացվում էր որպես բազմաթիվ պոմոններով մեկտեղված դրամա, որտեղ մարդու գլխավոր առաքելությունը սեփական կյանքը բեմադրելն ու անձնավորելն էր: «Չեղափոխությունների մի ամբողջ շարան էր պետք, որպեսզի մարդը վերջապես հասկանար կյանքի աստիճանակարգի թատերական խարխիլվածությունը: Առաջին հեղափոխությունը փոխեց բեմավիճակը և դերերը՝ բոլորին բերելով նույն բեմական հայտարարի՝ պատկերելով միմյանց հավասար»⁸: Հիրավի, պատերազմներով ու հեղափոխություններով հագեցած պատմությունն ապացույցն է մարդկանց բացառիկ հարմարվողականության և վերամարմնավորման հսկայական ընդունակության: Մակայն չպետք է մոռանալ, որ լավ հարմարվողականությունը հաճախ ձեռք է բերվում սեփական անձից հրաժարվելու միջոցով, երբ մարդը փորձում է քիչ թե շատ նմանվել պահանջված կերպարին՝ վտանգելով սեփական անհատականությունն ու անմիջականությունը⁹: Հարկ է նկատել, որ հենց պատմական ժամանակը, սոցիալական իրավիճակը, որոնք ուղեկցվում են սոցիալական ճգնաժամերով, հնի և նորի բախումներով, մշտապես առաջացնում են աշխարհի ինքնատիպ «թատերական» զգացողություններ: Թվում է, թե թատրոնը կյանքից վերցրել է ամեն ինչ և այդ ամենը ստեղծագործական հագեցվածությամբ վերադարձրել է կյանք: Տեղի ունեցողը ներկայացում, ինչ-որ խորհրդավոր գործողություն է թվում, որում բոլորը ներգրավված են իրենց կամքից անկախ, և այս ներկայացման «բեմուսույցը», մշտապես թաքնված լինելով հանդիսատեսից, տիրապետում է կառավարման անդիմադրելի ուժի:

Թատերականացման բնագործ մարդուն ուղեկցում է և՛ աշխարհում հաստատվելու, և՛ իրեն կերպարանափոխելու անհագ ձգտումներում: Նա ցանկանում է իրեն տեր և ոչ թե ստրուկ զգալ և իր համար օտար ու անհասկանալի, բայց անկասելիորեն ցանկալի կյանքը թատերականացնելու միջոցով դարձնել հարազատ, մտերմիկ ու մեկնելի, քանզի «իրական արվեստը կարող է նպաստել հասարակության մեջ լայնորեն տարածված սոցիալական պայմանների ըմբռնմանը»¹⁰: Ինչպես որ թատրոնում հանդիսատեսի վստահությունը և հիացումները դերասանը նվաճում է իրեն վստահված դերի արհեստավարժ կատարմամբ, այնպես էլ կյանքում հասարակության անդամների՝ միմյանց նկատմամբ վերաբերմունքը հիմնականում կախված է անհատների արտաքին դրսևորումներից: Այսինքն՝ մարդը կարող է արժանանալ հանրային արձագանքի ու ճանաչման՝ չբացահայտելով իր էությունը: Հարկ է նկատել, որ եթե ոչ հեռու անցյալում մարդու արտաքին տեսքը, սոցիալական դիրքն ու պատկանե-

⁸ Евреиннов Н. Н. Демон театральности. М., 2002, с. 45.

⁹ Տե՛ս Փրոմմ Ջ. Բեցտո՞ւ օտ սո՞վո՞ծո՞ւ. Շո՞ւո՞ւե՞կ ը՞նդ ի՞նչ. Մ., 2006, էջ 149:

¹⁰ Сеннет Р. Падение публичного человека. М., 2002, с. 48.

լությունը նրա կարգավիճակը բացահայտող էական ու ճշգրիտ ցուցիչներ էին, ապա մեր օրերում անհատի դերն ու սոցիալական պատկանելությունը ախտորոշելիս հանրային կարծիքը հաճախ ղեկավարվում է այնպիսի սուբյեկտիվ գործոններով, ինչպիսիք են՝ հագուկապը, արտաքին հմայքը, ծանոթության շրջանակները և այլն: Հաշվի առնելով մարդկանց գնահատելու հանրային այդ նախատրամադրվածությունը՝ թատերայնացված հասարակության մարդը ստիպված է մշտապես իր մասին նոր պատումներ հորինել, դեմքին հարմարեցնել տարաբնույթ դիմակներ ու ամրագրել վարքագծի ընդունելի ու ճանաչման արժանացած մոդելներ: Սակայն նման ճարտարումները որոշակի ջանքեր են պահանջում անհատից՝ կախված այն բանից՝ դիմակը նա ինքանակա՞մ է կրում, թե՞ հարկադրված: Այս իրողությունը ստիպում է խորհել, թե որտեղ է գտնվում դեմքի ու դիմակի, անձնականի ու սոցիալականի սահմանը: Առավել ևս, որ «սոցիալական դերն այն է, ինչն ակնկալվում է հասարակական համակարգում որոշակի տեղ զբաղեցնող յուրաքանչյուր անհատից և արտահայտում է վարքագծային խաղացանկում ներառված սոցիալական հարաբերությունները մեկը կամ մի քանիսը»¹¹: Դա ենթադրում է այնպիսի վարքագիծ, որը մի իրավիճակում տեղին է, իսկ մյուսում՝ ոչ: Այն պահից, երբ մարդը ստանձնում է որոշակի սոցիալական դեր, կամա թե ակամա դառնում է դիմակի կրող, սկսվում է նրա կերպարանափոխման ու փոխակերպման գործընթացը, նկատվում են «Ես»-ի շեղումներ (աբեռացիաներ), որոնք բազմապատկվում են կատարած դերերի աճին զուգընթաց: Մի գործընթաց, ինչի արդյունքում անհատը սկսում է իրեն գոյաբանորեն սահմանել, նույնացնել իրեն իր դերի հետ և դառնալ գործառույթ կատարող ում մեկը: Իսկ դա նշանակում է, որ դերը յուրատիպ սոցիալական ռազմավարություն և գործելաձև է, որից դուրս մարդն անանձնական է՝ զուրկ ցանկացած գոյաբանական հիմքից: Այսպիսով, կարելի է ասել, որ սոցիալական դերը մարդու համար ներկայացված լինելու միջոց և սեփական աննկատ կեցությունը հասարակության մեծ բեմից ի ցույց դնելու երաշխիք է: Փաստորեն, «դեմքի վրա սառած» սոցիալական դիմակը մարդուն զրկում է սեփականը և ուրիշինը (մասնավոր-սեփականը և սոցիալական-հանրայինը) տարբերելու կարողությունից: Սեփական դեմքի նույնացումը սոցիալական դերերի և դիմակների հետ խախտում է ուրիշների համար անտեսանելի անձնական տարածության ինքնավարությունը, և ինքնին խնդրահարույց է դարձնում անհատական գոյությունը: Դեմք դարձած դիմակը նվազեցնում է անձի դիմակը հանելու և դրանից տարբերվելու, առանձնանալու անձի ունակությունը:

Ժամանակակից աշխարհում դերասանի հիվանդությամբ վարակված անհատի մեջ վտանգված է սեփական «Ես»-ը, քանի որ ցանկացած տիպի գործունեություն՝ լինի մասնագիտական աշխատանք կամ ամե-

¹¹ Кон И. С. Люди и роли // Новый мир. 1970, № 12, с. 39.

նօրյա կենցաղային եռուզեռ, կյանքի է կոչվում ներկայացման տեսքով: Նման վարքագծում ոչ թե անմիջականորեն արտացոլվում են մարդու ներքին վիճակը, բուն մարդը, այլ՝ դիմակով միջնորդավորված արհեստական մի կազմավորում, որն ասես դիմակավոր արարածներ ծնող հանրությանը վարձով է տվել իր անձը: Նա ապրում է առանց իր ինքնությունը շրջապատին պարտադրելու, դառնում է կեղծադեմ և ունակ չէ որևէ այլ բանի, բացի սովյալ ժամանակին և տեղին հարմարեցված ներկայացում բեմադրելուց: Այս առումով երիցս իրավացի է Ռ. Մեննետը, երբ նկատում է, որ մարդը «հանրային տարածքում» արարում է ինքն իրեն, իսկ «մասնավոր տարածքում» իրացնում է սեփական էությունը¹²:

Հայտնի փաստ է, որ անհատի և հասարակության փոխազդեցությունը փոխկապակցված գործընթաց է. անհատը մի կողմից ակտիվ գործողությունների շնորհիվ կարող է փոխել և փոխում է սոցիալական միջավայրը, մյուս կողմից, սակայն, ենթարկվում է սոցիալական միջավայրի հակադարձ ազդեցությանը: Կարելի է ասել, որ այն դեպքերում, երբ անհատի գոյությունը դառնում է ուրիշի վրձնից կախված, երբ անհատի վրա հասարակության ներգործությունն ավելի ուժգին է, քան անհատի ներգործությունն է հասարակության վրա, տեղի է ունենում մշակույթի անկում¹³: Անհատի ինքնազգացողությունը որոշվում է նաև նրա նկատմամբ այլոց վերաբերմունքով: Չ. Կուլին այս կապակցությամբ իրավացիորեն նկատում է, որ յուրաքանչյուր մարդ իր «Ես»-ը կառուցարկելիս հիմնվում է իր հետ շփման մեջ մտած մարդկանց հետադարձ արձագանքների վրա: Այսինքն՝ սեփական «Ես»-ն ընկալելիս մարդը մշտապես կարևորում է այլոց աչքերում իր արտացոլանքը: «Հայելային Ես» հայեցակարգի շրջանակներում վերլուծելով անձի զարգացման ողջ գործընթացը՝ Չ. Կուլին եզրակացնում է, որ սոցիալական այս կամ այն դերը կատարելիս մարդը թեև ղեկավարվում է նախապես ունեցած անձնական դիրքորոշումներով ու որոշակի պատկերացումներով, բայց վերջիվերջո իրեն տեսնում ու գնահատում է այլոց իրականության մեջ արտացոլվելիս: Ուրիշները մեզ համար հայելի են, որտեղ արտացոլված են մեր մասին ուրիշների մտածումներն ու, երբեմն նաև, չասված խոսքերը¹⁴: Այլ կերպ ասած՝ մեր մասին մեր ըմբռնումը գործընթաց է, որը մշտապես զարգանում է ուրիշների հետ մեր շփման ընթացքում: Բայց նկատենք, որ մարդը այլոց վերաբերմունքին ու գնահատականներին միշտ էլ քննադատաբար է վերաբերվում և, որպես կանոն, ընդունում է միայն այն տեսակետներն ու կարծիքները, որոնք ինչ-որ չափով համընկնում են սեփական պատկերացումներին: Հակառակ դեպքում եթե նա խաղա միայն ուրիշների պատկերացումներին ու ճաշակին համապատասխան դեր, ապա մի օր կարող է հայելու մեջ տեսնել բոլորովին օտար մի դեմքի

¹² Տե՛ս **Сеннет Р.**, նշվ. աշխ., էջ 26:

¹³ Տե՛ս **Швейцер А.** Культура и этика. М., 2016, էջ 104:

¹⁴ Տե՛ս **Кули Ч. Х.** Человеческая природа и социальный порядок. М., 2000, էջ 320:

արտացոլանք: Այդ իսկ պատճառով մարդը մշտապես այնպիսի հայելի է փնտրում, որը հնարավորինս ճշգրտորեն կարտացոլի իր դեմքը: Ու թեև «Ժամանակակից համակարգում հայելի կամ հայելային մակերես այլևս չկա, և մարդն այլևս չի հանդիպում իր վատ կամ լավ կերպարին, բայց փոխարենը հայտնվել է խանութի ցուցափեղկը՝ սպառման երկրաչափական այն վայրը, որտեղ մարդը ոչ թե արտացոլվում է, այլ ոչնչացվում՝ զբաղված բազմաթիվ առարկաներ-նշանների խորհրդածությամբ և կլանված սոցիալական կարգավիճակի նշանների համակարգով»¹⁵:

Ժամանակակից սպառողական-գնագվածային հասարակություններում սեփական դերի ու դեմքի գնահատման հարցում պակաս կարևոր չէ նաև «Ընդհանրացված ուրիշի» հայեցակարգը, որը միևնույն գործընթացում ներգրավված բազմաթիվ մարդկանց դիրքորոշումների և արժեքների այն ամբողջությունն է, որի շրջանակներում դրսևորվում է անհատի «Ես»-ը¹⁶: «Ընդհանրացված ուրիշը» թեև վերացական էություն է, բայց կորպորատիվ մշակույթի շրջանակներում ձևավորված մի թիմ է, որտեղ մարդը իրացնում է իր սոցիալական դերը, և նրա արձագանքին համահունչ՝ մարդը կարող է գնահատել իր գործողություններն ու արտաքինը:

Մի բան ակնհայտ է, որ սոցիալական աշխարհում մարդը «դատապարտված» է շփվելու ուրիշների հետ և վերջիններիս գնահատականների ու վերաբերմունքի շնորհիվ ձեռք բերելու սոցիալական որոշակի բնութագիր, որին շատ հաճախ կարող է նաև չհամաձայնվել: Այդ Ուրիշը ձևավորում է նրա կերպարը, ավելի լավ է «ճանաչում և ներկայացնում» նրան և ավելի հստակ գիտի, թե ով է «նա», քան թե նա գիտի «իր Ես-ի» որպիսությունը: Նկատենք, սակայն, որ իրեն այդ կերպարով սահմանելու դեպքում մարդը ինքն իր նկատմամբ դառնում է ուրիշ: Ուրիշի ստեղծած կերպարը դառնում է դիմակ, որն էլ գրեթե անհնար է դարձնում դեպի սեփական կեցություն տանող ճանապարհը: Անհատի՝ իրեն սեփական դիմակին նույնացնելը ոչ այլ ինչ է, քան այն, ինչ իրենից ակնկալում են ուրիշները: Ինչպես նկատում է Մարկուզեն, «անհատները շատ հաճախ իրենց նույնացնում են պարտադրված կեցության ձևին՝ դրանում գտնելով զարգացման և բավարարվածության ճանապարհներ»¹⁷:

Ներանձնային, ինչպես նաև միջանձնային օտարվածությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների և վիրտուալ հաղորդակցության գերակայության պայմաններում հետզհետե նվազում է կենդանի շփման անհրաժեշտությունը: «Ցանցային քաղաքակրթությունը» իրոք փոխել է մարդկային համակեցության սոցիոմշակութային միջավայրը, և սոցիալական տարածության մեջ շփման ու հա-

¹⁵ Бодрийяр Ж., նշվ. աշխ., էջ 306:

¹⁶ St u Мид Дж. Г. Аз и Я // Американская социологическая мысль. М., էջ 126:

¹⁷ Маркузе Г. Одномерный человек. М., 1994, с. 30.

դորդակցման երբեմնի դժվարություններն ու անհարմարությունները աստիճանաբար հաղթահարվում են: Բայց ժամանակակից տեղեկատվական և մեդիա տեխնոլոգիաները ոչ միայն վերարտադրության, կերպարներ ստեղծելու միջոցներ են, այլև մշտապես մղում են ընկալման և ճանաչողության նոր մոդելների առաջացման: Համացանցը միջոց է, որն արմատապես փոխում է ժամանակի և տարածության դասական ընկալումները՝ հեռուն դարձնելով մոտիկ, ակնթարթը՝ տևական: Ցանցային հաղորդակցության մասնակիցները զրկված են միմյանց մասին հավաստի տեղեկատվությունից, և այդ պայմաններում կառուցվում է ինչպես սեփական, այնպես էլ վիրտուալ գրուցակցի կերպարը: Վիրտուալ համակարգերում ոչ թե իրական մարդիկ են շփվում, այլ այդ մարդկանց սիմուլյակրները (կեղծանմանակ): Այս պայմաններում մարդուց պահանջվում է առավելագույն ճկունություն, վերամարմնավորվելու և հարմարվելու կարողություն: Մարդը հորինում է վիրտուալ կերպար կամ վիրտուալ դիմակ (տարիք, սեռ, սոցիալական կարգավիճակ, անուն), որը հաճախ շատ քիչ աղերս ունի իրականի հետ, և խաղում է իր երևակայած դերը: Մակայն վիրտուալ դիմակը շատ հաճախ դիմազերծող տպավորություն է թողնում: Վիրտուալ անհատը, ի տարբերություն իրականի, կենտրոնացած է միայն այն բանի վրա, թե ինչպես է ընկալվելու ուրիշների կողմից: Համացանցը բեմականացված հասարակության ևս մեկ դրսևորում է, որը թույլ է տալիս ունենալ բազմաթիվ դեմքեր ու տարբեր ինքնություններ և խաղալ տարբեր դերեր: Շատ հեշտ է հանդես գալ անանուն և թաքնվել վիրտուալ գործակալի կամ ավատարի դիմակի տակ, այսինքն՝ լինել ոչ ոք և ամեն ինչ միաժամանակ: Մակայն, ինչպես նկատում է Ջ.Ագամբեն, «այն, որ ցանկացած մարդ կարող է անել ամեն ինչ կամ լինել ցանկացած մեկը, կամ այն ենթադրությունը, որ ինձ հետագոտող բժիշկը վաղը կարող է դառնալ տեսանկարիչ, ինձ սպանող դահիճ, ինչպես Գաֆկայի «Դատավարությունում», արտացոլում է այն ըմբռնումը, որ բոլորը պարզապես ճկվում են փորձելով համապատասխանել առաձգականության այն մակարդակին, որն այսօր շուկան ամենից շատ է պահանջում մեզանից յուրաքանչյուրից»¹⁸:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք համոզմունք հայտնել, որ դիմակն իսկապես թելադրում է որոշակի վարքագիծ, ինչպես նաև ենթադրում է որոշակի օրինաչափությունների առկայություն այն կրողների համար: **Այն մարդկային հարաբերությունների և նրանց սոցիալական դերի իմաստավորման խորհրդանշական ձևն է և հասարակական-քաղաքական, պատմամշակութային ներգրավվածության միջոց է:** Մարդը հաճախ դիմակավորվում է՝ թաքնվելու, սեփական կերպարից ազատվելու, ուրիշների սպասելիքներն արդարացնելու, ավելին՝ ներկա-

¹⁸ Агамбмен Дж. Нагота. М., 2014, с. 76.

յանալու համար: Անկասկած, դիմակ կրելու սլաքը ուղղված է արտաքին աշխարհին, սակայն դրա ինչպիսին լինելը ներքին որոշման և ընտրության արդյունք է: Այն ծածկում է իրական դեմքը, մինչդեռ դեմքը մշտապես ենթադրում է անձնական ներկայություն: **Դիմակն անընդհատ փոփոխվող դեմքի ֆիքսված պատկերն է:** Բաց, խոցելի և փոփոխական դեմքը կարիք ունի պաշտպանության: Առանց դիմակի մարդը խոցելի է, անպաշտպան, քանզի ինչպես ֆիզիկական մերկությունը, այնպես էլ հոգևոր մերկությունը (տվյալ դեպքում բաց անհատականությունը) կարիք ունեն պահպանության և խնամքի: Դիմակը կանգնեցնում է հուզական խոտորումների բարդ գործընթացը՝ դառնալով դեմքի պատկերը: Սակայն չպետք է մոռանալ, որ անհատը պատասխանատու է սեփական դեմքի համար, քանի որ այն ունի հեղինակության ուժ, որը կարող է փոխանցվել դիմակին, եթե այն կրողը ներկայանա սեփական դեմքի անունից: **Դիմակավորված մարդը կարող է իրեն թույլ տալ այնպիսի բաներ, որոնք չէր կարող անել դրա բացակայության պայմաններում:** Նա մշտապես հետապնդում է երկու նպատակ՝ մի բան թաքցնելու, մեկ այլ բան ցուցադրելու և/կամ ներկայացնելու: Մարդն ընտրում է դիմակը ոչ թե որպես դեմքի սովորական փոխարինող, այլ այն գերազանցող, մեկ ուրիշ կերպարանք ստանալու միջոց՝ մանևրելով իրականից խուսանավելու և երևակայականը կյանքի կոչելու ցանկությունների միջև: Դիմակը պետք է փոխհատուցի այն ամենը, ինչն անձի սեփական ընկալմամբ կամ համաձայնությամբ իրեն պակասում է կամ միաժամանակ անհրաժեշտ է: **Դիմակավորված մարդը հնարավորություն է ստանում ապրելու ոչ թե մեկ մարդու, այլ միաժամանակ բազմաթիվ մարդկանց կյանքով:** Դիմակը թույլ է տալիս ինքդ քեզ և աշխարհին նայել նոր, անսպասելի դիտանկյունից՝ ավելի դյուրին դարձնելով տարաբնույթ փոխահարաբերությունները: **Դիմակն անձնավորում է մարդուն և ձևավորում է սոցիալական սուբյեկտ:** Հասարակության մեջ սոցիալական նշանակալի դեր ստանալու համար անհատը պետք է սովորի և տիրապետի տվյալ դերի դրսևորման ձևին, ընդունի նրա թելադրած արտաքին կերպարը: Ինչպես նկատում է Ռ. Մեննետը, «դիմակն աստիճանաբար դառնում է այն բանի իրական սահմանումը, թե ով է մարդը»¹⁹: Սակայն չպետք է մոռանալ, որ մարդը կարող է դառնալ անհատականություն միայն այն ժամանակ, երբ տեսնի իր դեմքը որպես դիմակ և սկսի խաղալ իր սոցիալական դիմակի հետ՝ հաղթահարելով վերջինիս ուժեղ ձգողականությունը և այն դարձնելով ընդամենը հանրությանը ներկայանալու միջոց, իսկ խաղն էլ՝ ինքնատիպ ռազմավարություն:

Եվ վերջապես, գուցե դեն նետենք դիմակները, քանզի լավագույն դիմակ կարող է լինել հենց մեր դեմքը:

¹⁹ Сеннет Р. Падение публичного человека. М., 2002, с. 383.

ОВСАННА НАГАПЕТЯН – Общество спектакля: человек в маске. – События в современном мире, кажется, нарушили объективное ощущение времени. В нашем мире «быстрых времен» происходят такие радикальные социокультурные трансформации, которые не только обесценивают роль и значение бытующих в жизни обычаев, традиций и нравственных норм, но и ослабляют и обедняют социальную целостность. По существу, человечество живет в мире, представляющем собой своеобразную смесь (симбиоз) объективных, субъективных, виртуальных и иллюзорных реальностей, где человек организованного общества незаметно превращается в человека-декор различных социальных перформансов, вынужденный выполнять отведенную ему роль в каждом творении носить маску.

Онтологически, пожалуй, сложно отделить человека от его маски, ибо она формируется вместе с социализацией человеческой личности. В конечном итоге индивид становится личностью, когда он усваивает определенные социальные роли и соответствующие им социальные маски, предусмотренные культурой организации жизни в данном обществе. С этой точки зрения можно сказать, что социальная роль и соответствующая маска не только четко очерчивают границы кажущегося, формального и реального, что является постоянным спутником жизни человека, что является важным условием самовосприятия, но и играет роль связующего звена внутреннего мира человека с внешним миром. В результате, как говорится, любое лицо становится свободно выбранной маской, а маска становится публичным лицом.

Ключевые слова: *общество спектакля, виртуальная реальность, лицо, роль, маска, социальная игра, ролевое поведение*

OVSANNA NAHAPETYAN – The Society of the Performance. The Masked Man. – Events in the modern world seem to have disrupted the objective sense of time. In our world of "fast times", such radical socio-cultural transformations are taking place, which not only devalue the role and importance of once-in-a-lifetime customs, traditions and moral norms, but also weaken and impoverish social integrity. Essentially, humanity is living in a world that is a peculiar mixture (symbiosis) of objective, subjective, virtual and illusory realities, and where the man of organized society is imperceptibly transformed into a man-decor of various social performances, who is obliged to fulfill the role assigned to him in each creation. wear a mask.

Ontologically, it is perhaps difficult to separate a person from his mask, because it is formed along with the socialization of the human personality. Ultimately, an individual becomes a person when he adopts certain social roles and their corresponding social masks provided by the culture of organization of life in a given society. From this point of view, it can be said that the social role and the corresponding mask not only clearly outline the boundaries of the seeming, the formal and the real, which is a constant companion of human life, which is an important condition of self-perception, but also plays the role of bridging the inner world of a person with the outside world. As a result, as they say, any face becomes a freely chosen mask, and the mask becomes a public face.

Key words: *performance society, virtual reality, face, role, mask, social game, role behavior*

**ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՈՒՄ
ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ՀԱՍԼԵՏ ՄԻՍՈՆՅԱՆ

Ժամանակակից աշխարհում, սոցիոմշակութային անվերջանալի փոխակերպումներին զուգահեռ, փոխվում են նաև մարդկանց պատկերացումներն ու համոզմունքները, վերակազմավորվում է մարդկանց արժեհամակարգը, ի հայտ են գալիս նորանոր մարտահրավերներ ու վերջիններիս դիմակայելու նոր՝ նախորդներից լիովին տարբերվող, հաճախ նաև բացասող առաջնահերթություններ: Սոցիալական համակարգերին մշակութային տրավմաներ հասցնող ակնթարթային փոփոխությունները, համաշխարհայնացման գործընթացների հետևանքով մշակույթների ու առհասարակ մարդկային կեցության ստանդարտացմանը տանող անխուսափելի հեռանկարը առանց ավելորդ ջանքերի տարրալուծում ու անէացնում են կոլեկտիվ ինքնության առանձնահատկությունները: Իրավիճակն ավելի է սրվում, երբ թատերաբեմում հայտնվում է ազգային ինքնության՝ ապագա սերունդներին ավանդելու հիմնահարցը, հանգամանք, որը ենթադրում է անցյալի փորձի որոշակի իմաստավորում, ներկայի յուրացում ու կայուն ապագայի կառուցարկում: Այսպիսի հանգամանքներում, երբ ինքնության շարունակականության խոսույթն առերեսվում է նման բարդությունների, միջսերնդային պատշաճ երկխոսությունը դառնում է սոցիալական համակարգերի կառուցողականության և կայունության երաշխիքներից:

Հոդվածում միջսերնդային հարաբերությունների համատեքստում վերլուծվում է ազգային ինքնության շարունակականության հիմնախնդիրը՝ անդրադառնալով անցյալի կենսափորձի ներառվածությանը պոստֆիզուրատիվ, կոֆիզուրատիվ և պրեֆիզուրատիվ մշակույթներում: Հիմնվելով վերոնշյալ մշակույթներում միջսերնդային փոխհարաբերությունների համարժեք մոդելների վրա՝ աշխատանքում անդրադարձ է կատարվում նաև ինքնության ուղղահայաց (ժամանակային) և հորիզոնական (տարածական) չափումներին: Քննարկվում են միջսերնդային համերաշխության, սերունդների միջև կառուցողական երկխոսության կարևորությունը, ինչպես նաև թեմային առնչվող որոշ գործնական օրինակներ:

Բանալի բառեր – *ազգային ինքնություն, միջսերնդային համերաշխություն, միջսերնդային երկխոսություն, ինքնության շարունակականություն, մշակութային տրավմաներ, պոստֆիզուրատիվ մշակույթ, կոֆիզուրատիվ մշակույթ, պրեֆիզուրատիվ մշակույթ*

Համաշխարհայնացման մերօրյա մարտահրավերների թռուրտ-հում, երբ մարդը, թվում է, անվերջ դեգերում է ելքերի որոնման արատավոր շրջանում, ինքնության պահպանման, ինչպես նաև շարունակականության հարցերն ավելի օրակարգային են դառնում: Ինքնության

շարունակականության ապահովման ինչպիսի՞ ուղիների պիտի ապավինենք՝ ի վերջո նաև որոշարկելու և մտապահելու, թե սկզբունքների և մեխանիզմների բազմազանությունից որոնք են մեզ ձեռնտու: Խոսքն այս պարագայում ազգային ինքնության ու վերջինիս շարունակականության ապահովմանն ուղղված գործիքակազմի որոշարկման մասին է: Հավաքական ինքնությունը ներառում է ազգային հիշողությունն ու սոցիոմշակութային այն հենքը, որի վրա պիտի կառուցարկվի ապագան: Ազգային ինքնությունն արտացոլում է հանրայթի սոցիոմշակութային առանձնահատկությունները, հավաքական պատկերացումներն ու հոգեկերտվածքը: Ինքնության շարունակականության ապահովումը հենց ազգային կենսափորձի, ազգային կենսափիլիսոփայության ավանդումն է սերնդեսերունդ: Յուրաքանչյուր ազգի ինքնությանը վերաբերող մետապատումները ազգի պատմական անցյալի կենսական շերտն են: Դրանցում, իսկապես, ամփոփվում են ազգային կարծրատիպերը, ազգի տիպաբանական առանձնահատկությունները, ավանդույթներն ու ազգային մտածելակերպը, ծեսերն ու հավատալիքները, մշակութային և արժեքանական կողմնորոշիչները, աշխարհընկալման ու աշխարհայեցողության ուրույն գծերը:

Այս ամենի հետ մեկտեղ՝ կարևոր է հասկանալ՝ որտեղից ենք գալիս, ինքնութենական ինչպիսի անցյալ ենք ունեցել, ինչքանով է այն կապվում ներկային և տարածվում ապագայի վրա (արդյո՞ք ներկան և ապագայի տեսլականը կառուցվում են անցյալի հիման վրա): Մերօրյա մի շարք հասարակություններում նահանջ է նկատվում ազգային արմատներից: Մակայն մարդկության պատմությունը բազմիցս հանգել է այն փաստին, որ չի կարող կառուցարկվել ապահով ներկա ու կանխատեսվել կայուն ապագա առանց անցյալի յուրացման և ինքնաճանաչման: Ինքնաճանաչողությունը, հավաքական ինքնության պահպանումն ու շարունակականության ապահովումը, որպես կանոն, հիմնվում են անցյալի հետ կառուցողական երկխոսության վրա: Եթե չկա անցյալի հետ երկխոսություն, չկա նաև ապահով ներկայի և հուսալի ապագայի կառուցարկման ոչ մի հիմք: Խոսքն այստեղ հենց այն պատմական խորը շերտի մասին է, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր ազգի կենսունակության մակարդակի ապահովման և հեռանկարի հուսալիության՝ որպես շարժիչ ուժի գործառության համար: Ազգային ինքնության կառուցարկման, շարունակականության գործում անցյալի առկայությունը և դրա հետ պատշաճ երկխոսությունը հիմնային գործառույթ են կատարում՝ ամրապնդելով հանրայթների անվտանգությունն ու պաշտպանվածությունը: Մանավանդ մեր օրերում, երբ սոցիալ-տնտեսական, մշակութային, պատմական և քաղաքական մի շարք բեկումնային իրադարձություններ հանգեցրել են ինքնության (վերա)կառուցարկման, ինչպես նաև արդիականացման և փոփոխության խնդիրների, մարդիկ հայտնվել են փոփոխականների անձայրածիր հարթուր-

յան մեջ, որտեղ **միակ կոնստանտն արդեն ոչ թե ինքնությունը, այլ դրա կորստի վախն է:** Ընկրկելով սոցիոմշակութային հախուռն փոխակերպումների, արժեքների հարաբերականացման մարտադաշտում՝ մարդը ձախողում է ավանդապաշտության կողմից իր ուսերին դրված այն գլխավոր հրամայականը, ըստ որի՝ ազգային ինքնության (վերա)կառուցարկման, արդիականացման, շարունակականության ապահովման համար պետք է հիմնվել անցյալի պատմական շերտի վրա: Չնայած այն փաստին, որ մեր ազգը բազմիցս կարողացել է փյունիկի նման մոխիրներից հարություն առնել հենց պատմական անցյալում կուտակված մշակութային գանձարանի ճիշտ գործադրման շնորհիվ, այնուամենայնիվ մեր դեպքում ևս անցյալի հետ փոխհարաբերությունների կառուցողականության պակաս կա: Ինչ խոսք, պարադոքսալ է, երբ մի կողմից փորձում ենք անցյալի հետ կապող բոլոր կամուրջներն այրել (ինչպես, օրինակ, տեղի ունեցավ հեթանոսությունից քրիստոնեության անցնելու շրջանում), մյուս կողմից՝ ներկայի ու ապագայի համամասնության մեջ այնքան ենք անցյալի շերտն ամրակայում, այնքան ենք կառչում Վարդանի, Սամվելի, Արա Գեղեցիկի մետապատումներին ու ջանում կրկնել դրանք, որ դրանից գատ ամեն մի փոփոխություն կամ նորարարություն ընդունվում է որպես անցյալի բարբերին ու արժեքներին դեմ, որակվում որպես «հերետիկոսություն»՝ պարարտ հող ստեղծելով ինքնութենական, նաև սոցիալական համակարգի ճգնաժամի համար: Այս առիթով տեղին է նկատում Ս. Ջաքարյանը, որ նման հանգամանքներում «մեզ համար խնդիր է դառնում անցյալի հետ երկխոսության կազմակերպումն ու անցյալի հետ համամտածողության ձևավորման փորձառության ձեռքբերումը»¹: Ինքնութենական անցյալի ամենակարևոր գործառույթներից մեկը հանրույթին համախմբելն է: Հատկապես սահմանային իրավիճակներում համախմբվածությանը, համատեղ փոխգործունեությանը միտված քայլերն ավելի են ամրացնում հանրույթի ոգին, կոփում վերջինիս՝ որպես պայքարող հավաքականի: Սահմանային իրավիճակներում, երբ հանրույթի սոցիոմշակութային կյանքում տեղի են ունենում լուրջ փոփոխություններ, ինքնության համախմբող գործառույթը ձեռք է բերում ժամանակային որոշակիություն: Համախմբման ցուցիչն այսպիսի դեպքերում, որպես կանոն, ուղղվում է դեպի անցյալ, հետևապես կոչ է արվում համախմբվել ընդհանուր անցյալի շուրջը, որովհետև վերջինս այն պատմական ամբողջականությունն է, որն ի գորու է հանրույթին դուրս հանելու ճգնաժամային իրավիճակից: Այնուամենայնիվ պետք է նաև մտապահել, որ անընդհատ փոփոխվող արդի աշխարհում փոխվում ու վերաձևավորվում են նաև մարդկանց արժեքներն ու համոզմունքները, և ընդհանուր անցյալի շուրջը ստեղծված **(հաճախ կույր ու իռացիոնալ) համախմբվածությունը** ու առհասարակ **միայն անցյալի հիմքով առաջնորդվող ինք-**

¹ Ս. Ջաքարյան, Հայոց ինքնության հիմնահարցեր, ԵՊՀ հրատ., Եր., 2020, էջ 7:

նության շարունակականության որոշ սկզբունքներ կարող են ու պետք է զոհաբերվեն, որպեսզի ազգի կենսունակության ցուցիչն աշխատի նաև համընդհանուր ապագայի շուրջը համախմբվելու ուղղությամբ:

Առհասարակ միջսերնդային փոխհարաբերությունների տեսանկյունից ինքնության հարցի մասին խոսելիս կարող ենք գործ ունենալ ինքնության թե՛ ուղղահայաց (ժամանակային), թե՛ հորիզոնական (տարածական) չափումների հետ: Ուղղահայաց ինքնությունը կամ ուղղահայաց նույնակականության հիման վրա ձևավորված ինքնությունն ամբողջանում է ազգային սովորույթների, ծեսերի, մետապատումների միջոցով, այն «դեպի ներս ուղղված, ասես «ներքին օգտագործման» համար նախատեսված կյանքի կազմակերպման ներազգային մշակույթ է»²: Հորիզոնական ինքնությունը համաժամանակային բնույթի և արյունակցական-ազգակցական կապերի հիման վրա կառուցարկվող ինքնություն է, որն ամբողջանում է միևնույն աշխարհագրական տարածքում գործող սոցիալական կապերի շնորհիվ: Միջսերնդային երկխոսության համատեքստում մեզ ավելի հոգեհարազատ է ուղղահայաց ինքնությունը, քանի որ այն դրսևորվում է պատմական հիշողության, պատմական ճակատագրի ու ազգին բնորոշ սոցիոմշակութային այլ որակների միջոցով: Ուղղահայաց ինքնությունը, ածանցվելով հանրույթի սոցիոմշակութային պատկանելությունից, ներկայացնում է ազգային հոգեկերտվածքը: Ու քանի որ ինքնության շարունակականությունն ասելով մեծ մասամբ նկատի ունենք ազգային դիմագծի պահպանման խնդիրը, հետևաբար ուղղահայաց ինքնության միջուկի շուրջ են հյուսվում միջսերնդային խոսույթում ծավալվող ինքնության մասին քննարկումները:

Արժեքների համահարթման ուղով շարժվող արդի աշխարհում ինքնության շարունակականության հիմնախնդիրն ավելի լուրջ խոչընդոտների է բխվում, երբ տարբեր սերունդների՝ ինքնության պահպանման ու շարունակականության օգտին ծառայեցվող հաճախ հակոտնյա կողմնորոշիչներն ու արժեքներն առերեսվում են: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է առհասարակ հնարավոր սերունդների միջև կառուցողական երկխոսությունը, ու ի՞նչ մարտահրավերների առաջ է կանգնում ինքնության հիմնախնդիրը նմանօրինակ պայմաններում:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր սերունդ ունի իրեն ներհատուկ իդեալներ և արժեքային կողմնորոշիչներ: Արժեքային և աշխարհայացքային տարբերությունները հաճախ հանգեցնում են տարբեր սերունդների միջև անհամաձայնությունների, որոնք էլ իրենց հերթին սոցիալական համակարգերի թուլացման ու կենսագործունեության ոչ բարվոք մակարդակ ունենալու պատճառ են դառնում: Վերոնշյալ անհամաձայնությունների կիզակետում ավանդույթների և նորարարություն-

² Է. Հարությունյան, Ազգային ինքնություն. «սերունդների աշխարհ» և «ժամանակակիցների աշխարհ» // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 2 (29), 2019, էջ 13:

ների հավասարակշռությանը վերաբերող խնդիրներն են, որոնք բխում են սերունդների՝ անցյալի, ներկայի ու ապագայի հանդեպ վերաբերմունքից: Որպես կանոն՝ ամեն մի նոր սերունդ, գալով ժամանակի սոցիոմշակութային թատերաբեմ, կա՛մ զարգացնում է այն, ինչ ստացել է նախորդ սերունդներից, կա՛մ մի կողմ թողնելով անցյալի փորձը՝ կառուցում է իրեն ավելի հոգեհարազատ սոցիոմշակութային միջավայր՝ հիմնվելով աշխարհըմբռնման սեփական առանձնահատկությունների և արժեքային այն նոր համակարգ վրա, որոնք բնորոշ չեն նախորդ սերնդին: Մոցիոլոգիական տեսանկյունից ամբողջացնելով պատկերը՝ հունգարացի սոցիոլոգ Մանհեյմը պնդում է, որ ավագ սերունդը կազմում է որոշակի սոցիալական համատեքստ, իսկ երիտասարդ սերունդը գալիս ու **թաքն շփում (fresh contact)**³ է հաստատում դրա հետ: Նոր սերունդը փոքր-ինչ փոփոխում է սոցիալական համատեքստը՝ հարմարեցնելով իրեն: Ստացվում է, որ նոր սերունդները սոցիալական ու մշակութային փոփոխության և շարունակականության հնարավորություններ են բերում: Փոփոխության այս ցիկլը մատնանշում է մարդկային կյանքի ռիթմը, որի ժամանակ մշակութային գործընթացում հայտնվում են նոր մասնակիցներ (խոսքն այս պարագայում նոր սերունդների մասին է), և միաժամանակ անհետանում են հին մասնակիցները (ավագ սերունդը)⁴: Մերնդափոխության Մանհեյմի ներկայացրած պատկերը, սակայն, չի փակում այն բացերն ու չի լուծում այն խնդիրները, որոնք վերաբերում են միջսերնդային խաղաղ երկխոսության ու համագործակցային պայմանների ապահովմանը:

Վերջին տասնամյակներում արևմտյան աշխարհը սերունդների միջև արժեքային, աշխարհայացքային տարբերությունների մեկնության առնչությամբ կիրառում է **միջսերնդային համերաշխություն** եզրույթը: Սերունդների միջև սոցիալական համախմբվածության այս գաղափարի ուսումնասիրությունն ու հավուր պատշաճի իրագործումը ենթադրում են միջառարկայական մոտեցում, որը հնարավորություն է ընձեռում համատեղել խնդրին առնչվող մի շարք բնագավառների (փիլիսոփայություն, սոցիալական հոգեբանություն, սոցիոլոգիա, մարդաբանություն, տնտեսագիտություն և այլն) փորձառությունն ու մասնագիտական հմտությունը՝ տրամադրելով ավելի հարուստ, բազմազան ու բազմաբաղադրիչ հետազոտական արդյունքներ:

Միջսերնդային համերաշխությունը, ըստ էության, կառուցարկվում է հետևյալ սոցիոմշակութային առանցքների շուրջը.

- Ընդհանուր ինքնություն և/կամ շահեր ունեցող սոցիալական համակարգերում սոցիալ-տնտեսական զարգացման, կայունության,

³ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Mannheim K.**, The Problem of Generations, in Essays on The Sociology of Knowledge, ed. by Kecskemeti P., Routledge and Kegan Paul Ltd, London, 1952, էջ 292-312:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 286-296:

դժբախտությունների հաղթահարման և կարողությունների զարգացման հնարավորության ընձեռում,

- Սոցիոմշակութային, քաղաքական, կրոնական արժեքների միջոցով մարդկանց համախմբում,

- Գիտելիքի և մշակույթի փոխանցում տարիքային բոլոր խմբերի միջև⁵:

Մերունդների միջև համախմբվածությունը հենց հիմքն է միջսերնդային երկխոսության, որը միտված է կայունության և կառուցողականության, քանի որ սոցիալական համակարգերի կենսունակության բարձրացման ու գործունեության բարելավման հնարավորություններն այսօր մեծապես կախված են նաև միջսերնդային արդյունավետ համագործակցությունից և պատշաճ հաղորդակցությունից: Արդեն իսկ պարզ է, որ սերունդների համերաշխությունը անասելի հսկայածավալ ջանքեր է պահանջում. ջանքեր, որոնք պետք է գործադրվեն ոչ թե ժամանակի միայն ինչ-որ կետում, այլ անընդհատորեն: Միջսերնդային համերաշխությունը ձևավորվում է անհատների, ժողովուրդների, պետությունների գործողությունների միասնության հիման վրա: Իսկ համերաշխության դրսևորման շնորհիվ առաջանում է սոցիալական ամբողջականություն⁶: Վերջինս նպաստում է հասարակության մեջ անհատների ապահովության, հուսալիության և անվտանգության զգացմանը:

Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում 2018-2019 թվականներին իրականացված «Մարդկային զարգացման զեկույց»-ի առաջարկություններում ևս միջսերնդային երկխոսության տեղական պատշաճ մոդելի և համապատասխան մեխանիզմների առաջադրմանն ու բարելավմանն ուղղված մարտավարական ծրագրերի և համակարգերի վերանայմանը, փոփոխմանը միտված քայլերին մեծ կարևորություն է տրվում. «Արդի իրականության մեջ արմատացած՝ ավագ սերնդի կողմից կրտսերին գիտելիքի փոխանցման մոդելը պետք է փոխարինել այնպիսի համակարգերով, որտեղ երկու, երեք, նույնիսկ չորս տարբեր սերունդներ կկարողանան իրենց կենսափորձը փոխանցել միմյանց և համատեղ նախագծեր իրականացնել, ինչի շնորհիվ հասարակության գործունեության օրակարգը և առաջնայնությունները կկառուցվեն ըստ միջսերնդային համաձայնության և ընդհանուր հետաքրքրության»⁷: Միջսերնդային համերաշխությունը լավագույնս իրականություն է դառնում այն սպասումների և պարտավորությունների համատեքստում, որոնք այս կամ այն կերպ վերաբերում են սերունդների միջև առկա տարածական-ժամանակային, պատմամշակութային առանձնահատկություններին ու, իհարկե,

⁵ Տե՛ս **Cruz-Saco M. A.**, Intergenerational Solidarity, in Cruz-Saco M. A., Zelenev S. (Eds.), Intergenerational Solidarity, Palgrave Macmillan, New York, 2010, էջ 9-10:

⁶ Տե՛ս **Полношкевич О. А.** Солидарность поколений, Изд. ИГУ, Иркутск, 2014, էջ 18-19:

⁷ «Մարդկային զարգացման զեկույց 2018/2019, Սպազա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը», https://www.undp.org/sites/g/files/zskgkge326/files/migration/am/NHDR-ARM_sans-foreword.pdf, այց 16.10.2022:

սերունդների հաջորդականությանը: Այստեղ հիմնական մտահոգությունը ժամանակի ընթացքում սերունդների հաջորդականության միջոցով հասարակական գիտակցության մեջ կարծրացած արժեքների շարունակականության և նորարարության միջև հավասարակշռության հասնելուն ուղղված բանակցություններն են:

Միջսերնդային համերաշխությունը, իհարկե, չի իրագործվում միայն անհատական մակարդակում. որոշում կայացնողները, քաղաքական առաջնորդները մեծապես կարող են նպաստել սերունդների միջև երկխոսության համապատասխան պայմանների ստեղծմանն ու պահպանմանը՝ միաժամանակ որդեգրելով և զարգացնելով այդ երկխոսության կառուցողականությանը միտված գործիքակազմ: Մեծ Բրիտանիայի թագուհի Եղիսաբեթ Երկրորդը, 2006-ի ամանորյա իր ելույթում ընդգծելով սերունդների միջև համերաշխության՝ որպես սոցիալական և մշակութային երևույթի կարևորությունը, նշում էր, որ ժամանակակից կյանքի ռիթմն իր ճնշումներով թուլացնում է սերունդների միջև ավանդական կապերը, ուստի միշտ կա երիտասարդների և մեծերի միջև իրական անջրպետի առաջանալու վտանգը, որը հիմնված է անձանոթության, անտեղյակության և թյուրիմացության վրա⁸: Ցավոք, այդ անջրպետն այսօր, առավել քան երբևէ, մտահոգող է, եթե հաշվի առնենք նաև, որ դրա առաջացումը խնդրահարույց է դարձնում ինքնության, դրա առանձնահատկությունները սերնդեսերունդ փոխանցելու գործընթացը: Կասկած անգամ չկա, որ թագուհու՝ միջսերնդային համախմբվածության կոչն այժմ՝ մոտ երկու տասնամյակ հետո, ավելի հրատապ ու արդիական է:

Սերունդների միջև պատշաճ հարաբերություններ հաստատելու և ամեն տեսակի խզումներն ու դրանց կործանարար արգասիքները նվազագույնի հասցնելու հարցով կարծես մտահոգված է նաև ՀՀ գործող կառավարությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկած հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարության փաթեթը, ներկայացնելով ապագայի պետության տեսլականը ու դրան ուղղորդված ռազմավարական սկզբունքները, ներառում է կայունությունը՝ որպես ապագա սոցիալական համակարգի անօտարելի բնութագրիչ: Համակարգապահական կայունությունն այստեղ ևս ենթադրում է միջսերնդային համերաշխության երաշխավորում սոցիալ-տնտեսական, ինչպես նաև բնապահպանական պատասխանատվության հավասարակշռության միջոցով⁹: Իսկ

⁸ Տե՛ս **Butts D. M.**, Key Issues Uniting Generations, in Cruz-Saco M. A., Zelenev S. (Eds.), *Intergenerational Solidarity*, Palgrave Macmillan, New York, 2010, էջ 85: Որպես հիմնական աղբյուր տե՛ս **The New York Times**, Queen Urges Britons to Bridge the Generations, 2006, <https://www.nytimes.com/2006/12/26/world/europe/26queen.html>, այց՝ 25.10.2022:

⁹ Տե՛ս «Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, ՀՀ Կառավարության որոշումը՝ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>, այց՝ 25.10.2022:

հանրային քաղաքականությունը ու վերջինս կառուցարկող սկզբունքներն ու գործիքները ենթադրաբար **պետք է բացառեն սերունդների միջև ցանկացած խզում**: Հաշվի առնելով մեր պատմական ու նաև առօրեական փորձը՝ քաջ գիտակցում ենք, որ թղթի վրա գրվածը մի բան է, իսկ գործնականում այն իրականացնելը՝ հաճախ մեկ այլ բան: Ինչևէ, պետական մակարդակով ռազմավարական նման նպատակակետ ունենալն արդեն իսկ հուսադրող է:

Անկախ ամեն ինչից՝ դժվար է պատկերացնել անցյալի, ներկայի ու ապագայի փոխհարաբերություններում ինքնության «ճամփորդությունը»։ սերունդների երկխոսության անվերջանալի ու խճճված կծիկը բացվում է՝ մտածելու տեղիք տալով այն մասին, թե վերջիվերջո ինչ համամասնությամբ պետք է անցյալը, ներկան ու ապագան ներառված լինեն ինքնության շարունակականության սկզբունքների ու մեխանիզմների ընտրության հարցում: Արևմտյան գրականության մեջ վերոնշյալ հիմնահարցը, որպես կանոն, կապում են **պարտավորության** (commitment) հետ: Մի թե անցյալի փորձը, վերջինիս նույնկերպ կիրառության պարտավորությունն այսօրվա հասարակության բարվոք գործարկման համար անհրաժեշտ նախապայման է: Մերօրյա հետարդի իրականությունում ինքնության պահպանման ու վերջինիս կապվող որոշ պարտավորությունների այլընտրանքային տարբերակներ են պարբերաբար երևան գալիս: Դժվար է իրապես հասկանալ, թե այլընտրանքների բազմազանությունից որն է այն հենման կետը, որով պետք է առաջ շարժվել: Մյուս կողմից էլ մարդկային հասարակությունների անցյալի փորձի, ներկայի իրողությունների և նախանշվող ապագայի հարցերը վերջնական լուծումներ չեն ստանում: Ինչից է սկսվում և որտեղ է ավարտվում պարտավորությունների այն շրջանակը, որին ապավինելով՝ կարող ենք ապագա ստեղծել, որտեղ ինքնության շարունակականությունը կերաշխավորվի, որտեղ սերունդների միջև երկխոսության պատշաճ պայմաններ կստեղծվեն ու կպահպանվեն՝ միաժամանակ հավասարակշռելով անցյալի, ներկայի, ինչպես նաև ապագայի փոխհարաբերությունները:

Այս իմաստով ամերիկացի ազգագրագետ Մարգարետ Միդը տարբերակում է երեք տիպի մշակութային համակարգեր, որոնցից առաջինը **պոստֆիզուրատիվը**, մեծապես կարևորում է անցյալի փորձն ու հիմնվելով դրա վրա՝ փորձում է կառուցել ներկա սերնդի ապագան: Սա, կարելի է ասել, այն մշակույթն է, որն այնքան էլ չի հանդուրժում փոփոխությունները. դրանք այսպիսի հասարակություններում շատ աննկատ ու դանդաղ են կատարվում: «Ավագների անցյալը յուրաքանչյուր նոր սերնդի ապագան է. նրանց (ավագների) կենսակերպն է ապահովում (նոր սերնդի) հիմնային ծրագիրը»¹⁰: Սա նաև ավանդույթների

¹⁰ Mead M., Culture and Commitment: A Study of the Generation Gap, Natural History Press, New York, 1970, p. 1.

վրա հենվող հասարակություն է, որտեղ հասարակության հիմնական դերակատարների (ավագ սերնդի) կենսակերպն անփոփոխ/ավանդական է, ինքնությունը՝ նույնպես: Պոստֆիզուրատիվ հասարակությունները հիմնվում են ուղղահայաց ինքնության ու մշակույթի վրա, որտեղ ժամանակակիցները, որդեգրելով նախորդ սերունդների ավանդածը, իրենց կյանքն իմաստավորում են՝ համաձայնեցնելով նախնիների կենսաձևին: Թեև արևմտյան արդի հասարակություններին այնքան էլ բնորոշ չեն պոստֆիզուրատիվ մշակույթի տարրեր, սակայն մի շարք հասարակություններ կարծես փորձում են վերադառնալ դեպի ավանդական (նախնիներից ստացած) ինքնություն, որովհետև ավանդական ինքնությունն ինչ-որ առումով արդեն իսկ փորձված լինելով՝ հուսալի է թվում, իսկ վարքաձևերի ընտրության դիտանկյունից այն ավելի դյուրըմբռնելի ու նախընտրելի է դառնում: Ավանդապաշտական մտածողությունը, որպես կանոն, վարքի այլընտրանքային ձևեր չի փնտրում, ու այս փաստը ևս ստիպում է ավանդական հասարակություններին կառչած մնալ այն կենսակերպին, որը սերնդեսերունդ փոխանցվել է իրենց: Մյուս կողմից՝ կարևոր է նկատել նաև, որ բավականին հեշտ է անցյալի մետապատումները փոխառել ու սեփական կենսակերպը կադապարել դրանցով. չէ՞ որ այդ մետապատումներն ազգի անցյալի բեկումնային փուլերի ընթացքում հոգեկերտվածքում արդեն իսկ կարծրացած այն հենասյուներն են, որոնց միջոցով ու որոնց շուրջը հեշտությամբ կարելի է կառուցարկել և իմաստավորել ներկա սերնդի կյանքը: Մեր՝ հայերիս ինքնության կառուցարկման գործում դրոշակ դարձած մետապատումները (Մամվել, Արա Գեղեցիկ, Վարդան Մամիկոնյան և այլն) ասվածի լավագույն օրինակներն են, քանի որ «...ավելի հեշտ է սեփական կյանքն ընկալել ու իմաստավորել ըստ սյուժեի օրենքի և հերթական անգամ ապրել նախնիների ապրած «բարոյական հաղթանակների» բերկրանքը...»¹¹: Արդեն իսկ պարզ է, որ պոստֆիզուրատիվ մշակույթներն ունեն միջսերնդայնության յուրօրինակ բաղադրիչ, այն է՝ **պարտավորություն, ինչպես նաև ինչ-որ առումով կույր հակվածություն դեպի անցյալ**: Սա (ավագ սերնդի) կրկնվող ակնկալիքների և դրանց բավարարման ցիկլով գործառող մշակույթի շրջանաձև մոդել է, որտեղ անհատի ինքնությանը վերաբերող յուրաքանչյուր հարցի պատասխան, որպես կանոն, կանխորոշված է: Կենսակերպի կանխորոշվածության նման բարձր մակարդակը պայմանավորված է նաև այն փաստով, որ նոր սերունդն առանց կասկածների և հարցադրումների ընդունում է այն, ինչը պատրաստի և աներկբայորեն ընդունվում է շրջապատի, ինչպես նաև առհասարակ ավագ սերնդի կողմից: «Նման հանգամանքներում մշակութապես ձևայնացված և ներքնապես հաս-

¹¹ Է. **Հարությունյան**, Հուզական և հայեցողական կյանքի մշակույթ. հիմունքների բացահայտման պարադոքսը // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 3 (39), 2022, էջ 13:

տատուն վարքագծի քանակությունը, որը (երիտասարդ սերունդը) սովորում է, հսկայական է, և դրա միայն շատ փոքր մասն է գիտակցված»¹²,- նկատում է Միդը: Նման պայմաններում չգիտակցվածությունն ու անառարկելիությունը պոստֆիզուրատիվ մշակույթներին հաղորդում են կայունություն և շարունակականություն¹³: Սակայն սա բնավ չի նշանակում, թե միջսերնդային հարաբերությունները պոստֆիզուրատիվ մշակույթներում դյուրին ու անխոչընդոտ են: Որոշ սերունդներ կարող են ապստամբել՝ չուզենալով ենթարկվել նախնիների պատկերացումներին համապատասխանող կենսակերպի և վարքաձևի կանոններին ու մոդելներին: Ապստամբության հիմնական նպատակն է ավագ սերնդի վրա գտնվող ուժային սլաքը պտտել երիտասարդ սերնդի կողմը՝ վերջիններիս հռչակելով տվյալ հասարակության հիմնական դերակատարներ և որոշում կայացնողներ: Այդուհանդերձ, պոստֆիզուրատիվ մշակույթներում ապստամբության յուրաքանչյուր փորձ հիմնականում դատապարտված է ձախողման. իրենց իսկ պոստֆիզուրատիվ մշակութային նախադրյալների բնույթից ելնելով՝ ապստամբող սերունդներն անկարող են ներկայի ինդիվիդների լուծմանն ուղղված այլընտրանքային այնպիսի տարբերակներ առաջ քաշել, որոնք ավելի արդյունավետ ու նախընտրելի կլինեն, քան ավանդականը: Ուստի ապստամբությունները հասարակական գիտակցության մեջ ավելի են ամրապնդում այն մտայնությունը, որ գոյություն ունեցող ավանդական չափանիշներն անփոխարինելի ու հավիտենական են, իսկ ավագ սերնդի իշխանությունը՝ գերադասելի և ավելի հուսալի:

Որոշ հասարակություններում, որտեղ ժամանակակիցների վարքը գերակշռող մոդել է դառնում, տիրապետում է **կոֆիզուրատիվ** մշակույթը, որը, Միդի կարծիքով, առաջ է գալիս պոստֆիզուրատիվ մշակույթի աստիճանական քայքայման արդյունքում: Վերջինս վերաբերում է հասարակության սոցիոմշակութային, կրոնական, քաղաքական պատկերացումներին և առանձնահատկություններին ու դրանց փոխակերպմանը: Քաղաքակրթության զարգացումը, ռեսուրսների և տեղեկատվության հասանելիությունը և տեխնիկական առաջընթացը պարարտ հող են դառնում կոֆիզուրատիվ մշակույթի արմատավորման համար: Մարդկանց կենսակերպի և ինքնության նախկին՝ պոստֆիզուրատիվ մոդելը, որը կայունության ու ապահովության երաշխիք էր, աստիճանաբար կորցնում է հասարակության շրջանում իր գերակայությունը՝ այսպիսով զիջելով մշակույթի կոֆիզուրատիվ տեսակին, որն իր հերթին ենթադրում է ինքնության կառուցարկման և վարքային ձևերի փոփոխություն: Սոցիոմշակութային այսպիսի փոփոխություն-

¹² Mead M., նշվ. աշխ., էջ 21:

¹³ Այս իմաստով Միդը ինքն էլ նշում է, որ հարցեր առաջադրելու և գիտակից լինելու պակասը պոստֆիզուրատիվ մշակույթի պահպանման երկու հիմնական պայմաններն են: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Mead M., նշվ. աշխ., էջ 21-23:

ների համատեքստում ավանդական ինքնության դերի նվազեցման հետևանքով հասարակությունը դառնում է խոցելի: Ստեղծվում է վթարային իրավիճակ, որտեղ մարդիկ այլևս չեն կարող առաջնորդվել նախորդ սերունդների կուտակած փորձով ու սոցիոմշակութային արժեքներով, որովհետև սոցիալական վթարի պայմաններում դրանք խոչընդոտում են նոր իրավիճակին հարմարվելը: Ինչպես գրում է Հաբերմասը, տեղի է ունենում **լեգիտիմացիայի ճգնաժամ**¹⁴, և նախկին մշակույթը կորցնում է վերջնական նպատակներին և արդյունքներին հասնելու համար իր ներքին գործիքներին ապավինելու կարողունակությունը: Եվ հետևապես՝ առաջանում է ճգնաժամային իրավիճակ, որտեղ կոլեկտիվ ինքնության փնտրտուքները ուղեկցվում են ապակողմնորոշվածության բարձր մակարդակով: Համընդհանուր խուճապի և անվստահության մթնոլորտում ի հայտ է գալիս մշակութային նոր մոդելի խիստ անհրաժեշտություն: Լեհ սոցիոլոգ Պ. Շտոմպկան, մանրամասնորեն վերլուծելով սոցիալական փոփոխությունների էությունը, սոցիոմշակութային կյանքի վրա նման ազդեցություն ունեցող սոցիալական փոփոխություններն անվանում է **մշակութային տրավմաներ**: Ընդ որում՝ տրավմատիկ համարվելու համար սոցիալական փոփոխությունը պետք է նշանավորվի որոշակի ժամանակային որակով (լինի հանկարծակի և արագ), ծավալային առումով լինի համապարփակ ու արմատական, ունենա առանձնահատուկ ծագում և ընկալվի որպես անսպասելի, ցնցող, ինչ-որ տեղ նաև զարհուրելի, անգամ՝ վանող¹⁵: 2018-ի հայկական «թավշյա հեղափոխություն»-ը կազմաքանդեց սոցիոմշակութային նախորդ դաշտը՝ փոխարենը պարտադրելով նոր մոդել: Հետհեղափոխական (հետտրավմատիկ) իրականությունում այլևս չեին գործում նախկինում ընդունված համընդհանուր արժեքներն ու նորմերը: Հիմնահատակ ցնցումից հետո ասես վերակազմավորվում էր հայերի բարոյահոգեբանական կողմնացույցը: Իրոք, ճշմարիտ է ասված, որ սոցիալական այսպիսի փոփոխությունների ժամանակ «համոզմունքները հերքվում են, հավատքը՝ քայքայվում, վստահությունը՝ խախտվում, խարզիման կործանվում է, կուռքերը՝ ընկնում»¹⁶. Իրողությունների շղթա, որը միևնույն ժամանակ ամփոփ ներկայացնում է 2020-ի 44-օրյա պատերազմից հետո հայաստանյան (մինչ օրս) հետտրավմատիկ մթնոլորտը: Սոցիոմշակութային, կրոնական, ազգային արժեքների աստիճանակարգային վերադասավորությունն ինքնին ձեռնոց է՝ նետված սոցիալական համակարգերի բնականոն գործունեության ճանապարհի անխտորոքությանը, մանավանդ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ կոֆիզուրատիվ մշակույթի գերիշխանության պայ-

¹⁴ Տե՛ս **Habermas J.**, *Legitimation Crisis*, Polity Press, Cambridge, 1988, էջ 68-74:

¹⁵ Տե՛ս **Sztompka P.**, *Cultural Trauma: The Other Face of Social Change*, *European Journal of Social Theory* 3(4), Thousand Oaks, 2000, էջ 449-466:

¹⁶ **Sztompka P.**, նշվ. աշխ., էջ 458:

մաններում տիրապետող և առաջնային են դառնում այնպիսի արժեքներ ու երևույթներ, ինչպիսիք են մշակույթի զանգվածայնացումը, գիտելիքի կարգավիճակի փոփոխությունը, մարդու օտարումը հասարակությունից ու անգամ ինքն իրենից (նույնը, ի դեպ, կարելի է պնդել նաև պրեֆիգուրատիվ մշակույթի մասին, որի մասին քիչ հետո): Ու բնավ զարմանալի չէ, որ իրադարձությունների նման ընթացքն ու զարգացումը էականորեն խզում են առաջացնում ու աստիճանաբար մասնատում են ավանդական¹⁷ արժեհամակարգը: Թե վերոնշյալ խզումներն ինչպես են նպաստում սոցիալական համակարգերի վթարային վիճակում հայտնվելուն, և ինչ ուղիներով են վերջիններս կարողանում դուրս գալ ճգնաժամային իրավիճակից, հարցի մյուս կողմն է: Այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ հենց այս խզումների արդյունքում է մշակույթի մի տեսակից անցում կատարվում մյուս տեսակին (սա նաև պայմանավորված է, թե սոցիոմշակութային տրավմաների հակազդման ինչ մեթոդներ են գործի դրվում), որն այդ ժամանակահատվածում ավելի «ձեռնտու» է հասարակության անդամներին:

Վերադառնալով կոֆիգուրատիվ մշակույթներին՝ անհրաժեշտ է նկատել, որ իրականությունը այսպիսի մշակույթներում ներկան է, որտեղ սերունդների պարտավորությունն ուղղվում է ներկայում իրենց ժամանակակիցների վարքաձևերին ու կենսակերպի առանձնահատկություններին: Վարքի ձևերը կոֆիգուրատիվ մշակույթներում կամ այն մշակույթներում, որոնք ունեն կոֆիգուրատիվ տարրեր, այլևս մեծապես կախված չեն ավագ սերնդից: Այստեղ, կարելի է ասել, ստեղծվում է բազմազանության, հանդուրժողականության և ճկունության միջավայր, որտեղ երիտասարդ սերնդի, արմատապես տարբերվելով ավագ սերնդից, կարող է մշակել կենսակերպի նոր ոճեր՝ դարձնելով դրանք օրինակելի մոդելներ հասակակիցների շրջանում:

Այսօր մենք ապրում ենք այլ ժամանակներում: Մոցիոմշակութային փոխակերպումները ստեղծել են աշխարհի նոր՝ ավանդականին հիմքից հակադրվող պատկեր: Հետարդի մշակույթը, ունենալով ապակենտրոնությունն ու ապակառուցողականությունը որպես մեթոդաբանական գործիքակազմ, կարծես գլխավայր է շրջում մարդկային պատմության առանցքը՝ մարդկային միտքն ուղղորդելով մտածողության ուրիշ հորիզոններ: Ամեն բան ենթարկվում է ռեֆլեքսիվ վերանայման, սակայն ոչ թե ավանդական արժեքների, այլ արդյունավետության տեսանկյունից: Խորը ու անանց անդունդ է առաջանում հետարդիական մտքի և ավանդական հասարակության, վերջինիս կարծրատիպերի միջև: Հետարդիության փիլիսոփայությունն այսօր, կարելի է ասել, վերաձևավորել է աշխարհի պատկերը՝ առաջադրելով առաջ շարժվելու նոր մեխանիզմների համախումբ: Հասարակական մտքի այսպիսի ար-

¹⁷ Այս համատեքստում «ավանդական արժեհամակարգ» արտահայտության ներքո կարող ենք հասկանալ «պոստֆիգուրատիվ մշակույթ»:

մատական փոփոխությունների արդյունքում սերունդների միջև նոր տիպի խզում է առաջացել, որը մտածելու, ինչպես նաև մտահոգվելու տեղիք է տալիս:

Վերադառնալով մշակույթի տեսակների վերաբերյալ Մ. Միդի մտայնություններին ու միևնույն ժամանակ մտապահելով սերունդների միջև առկա խզումների՝ որպես սոցիոմշակութային հիմնախնդրի հույժ կարևորությունը՝ հարկ է անդրադառնալ նաև մշակույթի վերջին տարատեսակին, որը Միդն անվանում է **պրեֆիգուրատիվ**՝ մատնացույց անելով սերունդների միջև առկա անջրպետը: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ սերունդների միջև խզումը պրեֆիգուրատիվ մշակույթներում միայն երիտասարդ սերունդների օտարումը չէ. սա թե՛ երիտասարդ, թե՛ ավագ սերունդների օտարում է: «Մեկնաբանները մոռանում են, որ իրական հաղորդակցությունը երկխոսություն է,- գրում է Միդը,- և որ երկխոսության երկու կողմերն էլ չունեն բառապաշար»¹⁸: Միջսերնդային երկխոսության համար բարենպաստ հիմքեր ունենալու լավատեսական սպասումը, թվում է, հօդս է ցնդում: Պրեֆիգուրատիվ մշակույթում ծնողներն իրենք են սովորում երիտասարդ սերնդից: Այս պարագայում չկան ո՛չ նախնիների, ավագ սերնդի կողմից ուսուցանվող նարատիվները, ո՛չ ժամանակակիցների կողմից թելադրվող վարքի ձևերն ու աշխարհայացքային առանձնահատկությունները:

Մերօրյա անկայուն ու անընդհատ փոխակերպվող աշխարհում հեշտությամբ է արժեզրկվում հասարակական կյանքի կազմակերպման նախորդ սերունդների փորձը: Ուստի յուրաքանչյուր երիտասարդ սերունդ իր հերթին, ինչպես նշում էր Մանհեյմը, ջանում է փոփոխել սոցիոմշակութային համատեքստը՝ մշակելով կենսակերպի այնպիսի մոդել, որը բնորոշ կլինի թե՛ իր կենսաաշխարհին և թե՛ քաղաքակրթության զարգացման ժամանակի միտումներին: Պրեֆիգուրատիվ մշակույթներում մշտական փոփոխությունների անկայուն հոսքում մարդկանց սոցիալական գործունեության վրա ապագայի ազդեցությունն ավելի մեծ է, քան անցյալի և ներկայի: Պրեֆիգուրատիվ մշակույթի գերակայության պայմաններում իրականությունն ուղղորդված է դեպի ապագան, դեպի անորոշը, իսկ նորարարությունն ու անկանխատեսելիությունն ընդունվում են որպես նորմալ երևույթներ: Իրավացի է Միդը՝ նկատելով, որ սրանով «մտնում ենք մշակութային էվոլյուցիայի բուլդոզերի նոր փուլ»¹⁹: Նկարագրվող անորոշությունը ժամանակի, պատմության ռիզոմատիկ բազմակենտրոնության ու ճեղքվածության արգասիքն է, որին անխուսափելիորեն հանգում ենք մերօրյա ապակենտրոն իրականությունում: Այսպիսի պայմաններում մի շարք առանցքային հիմնախնդիրների հետ վերափմաստավորվում են նաև ինքնության և պարտավորության հիմնահարցերը: Բազմակարծության, արժեքային

¹⁸ Mead M., նշվ. աշխ., էջ 62:

¹⁹ Նույն տեղում, էջ 51:

կողմնորոշիչների և եզրագծերի մշուշային անտեսանելիության պայմաններում **ինքնության ընտրանքն այսօր վերաձել է երկրնտրանքից դեպի բազմընտրանքի**: Պյուրալիստական առանցքի վրա գործառոդ այսօրվա իրականությունն արմատախիլ է արել նախկինում գործող աշխարհի կարգն ու արմատավորել սեփականը: Հետարդիության խտություն անցյալի մետապատումներն այլևս անվերապահ հավատով ու վստահությամբ չեն ընդունվում, այլ ընդհակառակը՝ զրկվում են նախկինում իրենց բնորոշ համոզականությունից: Ինչպես նշում է Ժ. Ֆ. Լիոտարը հայտնի աշխատության առաջաբանում, հետարդիությունն անվստահություն է մետապատումների նկատմամբ²⁰: Եվ իրոք, այլևս հավատ չընծայելով անցյալի մետապատումներին՝ այսօրվա մարդն առաջնորդվում է լիովին այլ սկզբունքներով, որի արդյունքում ադոտ ու երեբուն են դառնում այն հիմքերը, որոնց շուրջը հյուսվում է ինքնության և միջսերնդային համերաշխության խճանկարը:

Ինչպես արդեն պարզ դարձավ, համաշխարհայնացման և սոցիոմշակութային արմատական փոխակերպումների համատեքստում ինքնության շարունակականության հիմնախնդիրը մեծ խոչընդոտների է բախվում: Խնդիրն ավելի մեծ հնչեղություն է ստանում, երբ հաշվի ենք առնում տարբեր սերունդների՝ ինքնությանը վերաբերող ներհակ մոտեցումները, արժեքներն ու կողմնորոշիչները: Նման պայմաններում, հարկավ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել սերունդների միջև երկխոսություն ծավալելու, միջսերնդային համերաշխություն ապահովելու համար: Վերջինս հնարավորություն է տալիս նաև հասկանալու ինչ դերով և համամասնությամբ կարող են անցյալի փորձն ու ավանդույթները, ներկայի իրողություններն ու ապագայի նախանշվող տեսլականը ներառվել ինքնության կառուցարկման, արդիականացման գործընթացում: Այս իմաստով Մ. Միդի՝ պոստֆիզուրատիվ, կոֆիզուրատիվ և պրեֆիզուրատիվ մշակույթի տեսակների վերլուծությունը լայն հորիզոններ է բացում ինքնության, պարտավորվածության ու միջսերնդային հարաբերությունների միջև առկա աղերսները վեր հանելու և մանրամասն ուսումնասիրելու համար:

ГАМЛЕТ СИМОНЯН – Основная проблема преемственности идентичности в условиях межпоколенческого диалога. – В условиях бесконечных социокультурных трансформаций, происходящих в современном мире, меняются также представления и убеждения людей, перестраивается система ценностей людей, появляются новые вызовы и приоритеты для их решения, которые полностью отличаются от прежних, а зачастую и опровергают их. Мгновенные изменения, наносящие культурные травмы социальным системам, неизбежная перспектива, ведущая к стандартизации культур и человеческого существования в целом в результате процессов глобализации, растворяют и сводят на нет характеристики

²⁰ St' u **Lyotard J. F.**, The Postmodern Condition: A Report on Knowledge, Introduction, University of Minnesota Press, Minneapolis, 1984:

коллективной идентичности без каких-либо дополнительных усилий. Ситуация обостряется, когда встаёт вопрос о передаче национальной идентичности будущим поколениям - обстоятельство, которое предполагает осмысление прошлого опыта, овладение настоящим и построение устойчивого будущего. В таких условиях, когда дискурс преемственности идентичности сталкивается с такими сложностями, правильный межпоколенческий диалог становится одной из гарантий конструктивности и устойчивости социальных систем.

В статье анализируется проблема преемственности национальной идентичности в контексте межпоколенческих отношений, говоря о включении прошлого жизненного опыта в постфигуративную, кофигуративную и префигуративную культуры. На основе эквивалентных моделей межпоколенческих отношений в вышеупомянутых культурах в работе рассматриваются также вертикальное (временное) и горизонтальное (пространственное) измерения идентичности. Обсуждается важность межпоколенческой солидарности, конструктивного диалога поколений, а также приводятся некоторые практические примеры, относящиеся к теме.

Ключевые слова: *национальная идентичность, межпоколенческая солидарность, межпоколенческий диалог, преемственность идентичности, культурные травмы, постфигуративная культура, кофигуративная культура, префигуративная культура*

HAMLET SIMONYAN – *The Problem of Continuity of Identity in the Context of Intergenerational Dialogue.* – With the endless socio-cultural transformations taking place in the modern world, people's notions and beliefs are also changing, people's value system is being reorganized, new challenges and new priorities to face them, completely different from the previous ones, and often negating, appear. Instantaneous changes that cause cultural traumas to social systems, the inevitable prospect resulting from globalization processes and leading to the standardization of cultures and generally human existence dissolve and eliminate the characteristics of collective identity without any extra effort. The situation becomes more intense when the issue of passing national identity on to future generations comes out; a circumstance that implies making sense of the past experience, mastering the present and building a sustainable future. In such circumstances, when the discourse of continuity of identity faces such complications, proper intergenerational dialogue becomes one of the guarantees of the constructivity and stability of social systems.

The article analyzes the problem of continuity of national identity in the context of intergenerational relations, referring to the inclusion of past life experiences in postfigurative, cofigurative and prefigurative cultures. Based on the equivalent models of intergenerational relationships in the above-mentioned cultures, the article also addresses the vertical (temporal) and horizontal (spatial) dimensions of identity. The importance of intergenerational solidarity and constructive dialogue between generations, as well as some practical examples related to the topic are discussed.

Key words: *national identity, intergenerational solidarity, intergenerational dialogue, continuity of identity, cultural traumas, postfigurative culture, cofigurative culture, prefigurative culture*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՍՈՂԵԼԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԿԱՐԼԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Տնտեսական վարքի մոդելավորման խնդիրը, որն ավանդաբար տնտեսագիտության ուսումնասիրության տիրույթում է եղել, այսօր դարձել է նաև փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության, իրավագիտության հետազոտությունների առարկա: Խնդրի հանդեպ միջգիտակարգային հետաքրքրությունը պատահական չէ, քանի որ տնտեսական վարքի դրսևորումների պատճառներին և օրինաչափություններին առնչվող հարցերը հասարակական կարևոր նշանակություն են ձեռք բերել: Հասարակության անդամների որպես սպառողների տնտեսական վարքն այսօր դարձել է անկանխատեսելի և չի ենթարկվում տնտեսագիտական հաշվարկային ալգորիթմներին: Պրակտիկան ցույց է տալիս, որ տնտեսության կառավարման շատ հարցերի լուծումներ, որոնք իրականացվում են տնտեսագիտական նորմատիվային մոտեցմամբ, ֆինանսական ցուցանիշներից ելնելով, չեն բավարարում հասարակության ներկայիս պահանջները: Առաջացել է տնտեսական վարքի այնպիսի օրինաչափությունների բացահայտման անհրաժեշտություն, որոնք դուրս են մնացել տնտեսագիտական տեսությունների հետազոտության շրջանակից և կարիք ունեն հարակից ոլորտներում իրականացվող հետազոտությունների: Տարբեր մեթոդների կիրառմամբ կառուցվում են մարդու տնտեսական վարքի տարատեսակ մոդելներ, սահմանվում վարքի արդյունավետության ցուցանիշներ: Առավել կիրառելի են դարձել այն մոդելները, որոնցում հաշվի են առնված ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական գործընթացներով և անձի անհատական-հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված գործոնները: Այս համատեքստում հոգեբանական գիտության մեջ արդիական են դարձել տնտեսական վարքի հիմնախնդրին առնչվող այնպիսի հետազոտությունները, որոնցում հաշվի են առնվում նաև անձի անհատական և էթնոհոգեբանական առանձնահատկությունները:

Հոդվածում դիտարկվում է անձի տնտեսական վարքի ինդուկտիվ մոդելը, որը ձևավորվել է 2018-2022 թվականներին իրականացված փորձերի հիման վրա: Դրանում անհատական-հոգեբանական առանձնահատկությունները և սոցիալ-հոգեբանական գործոնները հանդես են գալիս որպես իրավիճակային փոփոխականներ: Մոդելը բնույթով իրադրային է, քանի որ արտացոլում է անձի տնտեսական վարքի հոգեբանական բնութագիրը փոքր ժամանակահատվածում:

Բանալի բառեր - *տնտեսական վարք, մոդելավորում, վարքի արդյունավետություն, հոգեբանական գործոններ, ինքնակարգավորում, արժեքային համակարգ, մոտիվացվածություն, իրադրային մոդել*

Տնտեսական վարքի մոդելավորման հիմնախնդրի էությունը

Տնտեսության զարգացմանը զուգահեռ փոխվում է արտադրության և սպառման բնույթը: Փոփոխությունների պատճառով առաջացած անորոշ իրավիճակներում խախտվում է անձի տնտեսական վարքը պայմանավորող անհատական-հոգեբանական և սոցիալ-հոգեբանական գործոնների հարաբերակցությունը, ինչի հետևանքով անձը սկսում է դրսևորել ոչ օրինաչափ տնտեսական վարք: Նախկինում գործող վարքի մոդելները դառնում են սոցիալ-տնտեսական միջավայրերին անհամապատասխան, ձևավորվում են տնտեսական վարքի նոր մոդելներ, որոնցում անձի հոգեբանական առանձնահատկությունները կատարում են իրավիճակային փոփոխականների դեր: Այս համատեքստում էլ գործնական նշանակություն են ձեռք բերում անձի տնտեսական վարքին առնչվող այնպիսի հետազոտությունները, որոնցում տնտեսական վարքը դիտվում է որպես տնտեսական, հոգեբանական և սոցիալ-քաղաքական գործոնների համադրությամբ ձևավորվող անձնային բնութագիր:

Տնտեսական վարքի մոդելավորումը սովորաբար իրականացվում է երկու մոտեցմամբ՝ նորմատիվ և դիսկրիպտիվ: Նորմատիվ մոտեցմամբ, շեշտը դնելով սահմանումների և տեսական բնույթի աքսիոմների վրա, դիտարկվում և վերլուծվում են տնտեսական վարքի վրա ազդող սակավաթիվ, բայց հետազոտողի տեսանկյունից առավել կարևոր գործոնները: Այս մոտեցմամբ կառուցվող մոդելները նախատեսված են դեդուկտիվ մտահանգումների միջոցով մակրոմակարդակում ընդհանրացումներ կատարելու համար և առավելապես տեսական բնույթի են: Դիսկրիպտիվ մոտեցմամբ դիտարկվում են տարբեր իրավիճակներում վարքի վրա ազդող հնարավորինս շատ գործոններ, կատարվում է բազմագործոն վերլուծություն¹: Որքան տարաբնույթ են դիտարկվող գործոնները, այնքան կառուցված մոդելն առավել իրատեսական է համարվում: Նման մոդելներն առավելապես իրադրային են, դինամիկ և կարող են հանդես գալ որպես ընդհանրական մոդելների լոկալ ենթամոդելներ: Անձի տնտեսական վարքը հետազոտելիս տնտեսագիտական տեսություններն առաջնորդվում են հիմնականում նորմատիվ մոտեցմամբ:

Տնտեսական ցանկացած գործունեություն ուղեկցվում է ընտրության գործընթացով: Տնտեսական ընտրությունը անձի կողմից իր բյուջեի բաշխման վերաբերյալ որոշում ընդունելն է: Այն ենթադրում է այլընտրանքների որոնում, համեմատում, գնահատում, որոշման կայացում և դրանից բխող գործողությունների իրականացում: Մինչև անցյալ դարի կեսերը դասական տնտեսագիտական տեսությունները տնտեսական մարդու մոդելի հիմքում դնում էին տնտեսական վարքի բացարձակ արդյունավետության սկզբունքը, համաձայն որի լավագույնը այն ընտրությունն է, որը հանգեցնում է պահանջումների առավելագույն բա-

¹ Տե՛ս **Հ. Մ. Ավանեսյան**, Փորձարարական հոգեբանություն, ուսումնական ձեռնարկ, Եր., Էդիթ Պրինտ, 2010, 288 էջ:

վարարման: Բացարձակ արդյունավետության սկզբունքը հնարավորություն էր տալիս դեդուկտիվ մեթոդներ կիրառելով հիմնավորելու շուկայական տնտեսության պայմաններում անձի՝ առավելագույն եկամուտներ ստանալու ձգտումը: Բայց, ինչպես նշում է Հ. Մայմոնը, հենվելով տնտեսական վարքի բացարձակ արդյունավետության սկզբունքի վրա՝ տնտեսագետներն իրենց ջանքերն ուղղում էին ընտրության արդյունքների հետազոտմանը, իսկ բուն ընտրության գործընթացը մնում էր նրանց հետաքրքրությունների շրջանակից դուրս²: Դանիել Կահնեմանի և Ամոս Տվերսկու փորձարարական հետազոտություններն ապացուցեցին³, որ անձի տնտեսական վարքը կարիք ունի մեթոդաբանական նոր սկզբունքների վրա հենվող բազմաչափ հետազոտությունների, ինչի համար պետք է անցում կատարել հոգեբանական դաշտ: Հետազոտությունները փաստեցին, որ մարդիկ չեն կարողանում արդյունավետ գնահատել ո՛չ ակնկալվող շահի չափը, ո՛չ դրա հավանականությունը: Հակված չեն հանուն շահի դիմել ռիսկի, երևոյթների առաջացման հավանականությունը հաշվելիս հաճախ սխալվում են: Թերագնահատելով հնարավոր պատահարների հավանականությունը՝ առաջնորդվում են կարծրատիպերով, նախապաշարումներով, հույզերով: Հենվելով սույն փաստերի վրա՝ Կահնեմանն ու Տվերսկին որպես որոշումների կայացման բացարձակ արդյունավետության տեսության այլընտրանք առաջ քաշեցին «հեռանկարների տեսությունը»⁴, որը հնարավորություն ընձեռեց մեկնաբանելու մարդկանց տնտեսական վարքի այնպիսի իռացիոնալ դրսևորումներ, որոնք հնարավոր չէր բացատրել բացարձակ արդյունավետության տեսանկյունից: Տնտեսական վարքի բազմաբնույթ դրսևորումները սկսեցին դիտարկվել որպես «ռացիոնալի և իռացիոնալի, անհատականի և խմբայինի, անձնականի և հասարակականի, օբյեկտիվի և սուբյեկտիվի համադրություն»⁵: Անձի անհատականության և գործունեության մոտիվների բազմաձևությունը հանգեցրեց այն համոզման, որ մարդու տնտեսական վարքը պետք է հետազոտել բազմագործոն ազդեցությունների համապատկերում: Առավել իրատեսական համարվեցին անձի տնտեսական վարքի այն մոդելները, որոնք կառուցվում էին ոչ միայն տնտեսական, այլև հոգեբանական գործոնների ազդեցության հաշվառմամբ,

² Տե՛ս **Herbert A. Simon**. Rationality as Process and as Product of Thought. Richard T. Ely Lecture // American Economic Review, May 1978, v. 68, no. 2, էջ 1–16: **Саймон Г. А.** Методологические основания экономики / Системные исследования. Методологические проблемы. Ежегодник 1989-1990. М.: Наука, 1991, էջ 91-109:

³ Տե՛ս **Kahneman D., Tversky A.** On The Reality of Cognitive Illusions // Psychological Review. 1996, V. 103, No. 3, էջ 582-591. **Kahneman D., Tversky A.** Choices, Values, and Frames. Russel Sage Foundation. Cambridge University Press, 2000, 840 էջ:

⁴ Տե՛ս **Белянин А. В.** Математическая психология как раздел экономической теории // «Психология». Журнал Высшей школы экономики, 2004, т. 1, № 3, էջ 111:

⁵ **Желаева С. Э.** Методологические принципы исследования поведения человека в экономике // Вестник Тамбовского университета, 2011, № 1, с. 179-187, (Гуманитарные науки), էջ 186:

ինչն էլ հանգեցրեց տնտեսական մարդու սոցիոլոգիական, հոգեբանական, մարդաբանական և այլ մոդելների առաջացման:

Նեոդասական, ինստիտուցիոնալ և էվոյուցիոն տնտեսագիտական ուղղությունները անձի տնտեսական վարքի հիմնախնդիրները քննարկում են մեթոդաբանական տարբեր ելակետերով: Հենվելով վարքի բացարձակ արդյունավետության և եկամուտների մաքսիմալացման դրույթի վրա՝ նեոդասական ուղղությունը համարում է, որ տնտեսական որոշումներ ընդունող անձը հաստատուն պահանջումնքներ և նախասիրություններ ունեցող սուբյեկտ է, որն ունի ճշգրիտ սահմանված (նախանշված) նպատակներ, որոնք բնութագրվում են օպտիմալացման ենթակա օգտակարության ֆունկցիաների միջոցով: Մոդելը ենթադրում է, որ շահի ձգտելիս մարդը դրսևորում է վարք, որն ուղեկցվում է հետևյալ նախապայմանների պարտադիր ապահովմամբ. ա) որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիություն, բ) տնտեսական գործունեության մեջ էսամոլության դրսևորում, գ) հանուն առավելագույն անձնական շահի՝ արտաքին սահմանափակումների չեզոքացում (այդ թվում՝ նաև այլոց շահերի անտեսում)⁶:

Ինստիտուցիոնալ ուղղությունը տնտեսական վարքի վերլուծության հարցը քննարկում է անձի նախասիրությունների համակարգից ելնելով: Ըստ այս ուղղության՝ նախասիրությունների համակարգը, որը ձևավորվում է անձի արժեքների, դիրքորոշումների, կարծրատիպերի, սովորությունների հիման վրա, որպես անձի հաստատուն բնութագիր և որպես էնդոգեն համակարգ ավելի վճռորոշ ազդեցություն ունի ընտրության գործընթացի վրա, քան էկզոգեն գործոնները: Հետևաբար այն թեզը, թե անձն իր որոշումներն ի կատար է ածում տեղեկատվության հասանելիության պայմաններում ստացվող ճշգրիտ հաշվարկների միջոցով՝ հանուն անձնական շահի բացարձակ մաքսիմալացման, չի համապատասխանում իրականությանը: Որպես հիմնավորում ինստիտուցիոնալիստները մեջբերում են անձի մտավոր կարողությունների սահմանափակության և տեղեկատվության ոչ լիարժեքության հանգամանքը՝ անձի վարքի վերլուծության և հետազոտության մեթոդաբանական ելակետ համարելով սահմանափակ արդյունավետության սկզբունքը: «Մաքսիմալացում» եզրույթը փոխարինում են «բավարարվածություն» եզրույթով, որը հայեցակարգային առումով տնտեսագիտության մեջ չունի այնքան կարևորություն, որքան հոգեբանության մեջ, որտեղ, համաձայն մոտիվացիոն տեսության, մարդուն գործունեության մղող մոտիվների հիմքում անբավարարվածության զգացումն է, ինչը և նրան ստիպում է ըստ պահանջումնքների բավարարման հերթագայության կանոնակարգել և ուղղորդել սեփական վարքը:

Էվոյուցիոն ուղղությունը, մերժելով վարքի դրսևորումներում միայն անձնական շահով առաջնորդվելու դրույթը, համարում է, որ տնտեսա-

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 179:

կան համակարգերը գտնվում են դինամիկ վիճակում, որոնցում տնտեսական սուբյեկտները գործում են ոչ որպես կատարյալ մաքսիմիզատորներ: Էվոյուցիոն տնտեսագիտությունը չի ընդունում ընտրանքի տարբերակների և որոշում կայացնող անձանց հատկանիշների նախօրոք հաստատագրված բնութագրեր: Նրա ուշադրության կենտրոնում ոչ կայուն տնտեսական երևույթներն են, որոնք ներսից ձևավոխում են տնտեսական գործընթացները և դրանց հետևանքները: Այս գործընթացները ծագում են տնտեսական տարբեր սուբյեկտների սահմանափակ արդյունավետությամբ ուղեկցվող գործողությունների շնորհիվ և պայմանավորված են դինամիկ տնտեսական գործընթացներում անձի փորձով ու փոխհարաբերություններով: Տեղեկատվության անորոշության պայմաններում անձը դիտվում է որպես հոգեբանական, ֆիզիկական և ինտելեկտուալ սոցիոտնտեսական յուրահատուկ գենոտիպ: Ըստ էվոյուցիոնիստների ընթացիկ իրավիճակներով պայմանավորված՝ անձի մեջ ձևավորվում են «տնտեսական գեներ», որոնք ժառանգելի են: Համարում են, որ յուրաքանչյուր տնտեսական անձ հետերոգեն է, տիրապետում է տնտեսական գեների որոշակի հավաքածուի, որոնք տնտեսական համակարգի դինամիզմի պատճառով կարող են մուտագվել, բայց փոխանցվում են որպես տեղեկատվություն և ամեն հաջորդ ժամանակային փուլում ուղղորդում անձի վարքը: Անձը գործում է պահին համապատասխանող իրավիճակի հոգեբանական ազդեցություններով⁷:

Ի տարբերություն տնտեսագիտական մոդելների՝ տնտեսական վարքի հոգեբանական մոդելներն ունեն իմացաբանական այլ կարգավիճակ և մեթոդաբանական այլ հենք: Հոգեբանական մոդելների հիմքում հոգեբանները դնում են տարբեր դրդապատճառներ. բիհեյվիորիստները, օրինակ, վարքի հաստատագրված մեխանիզմները, ֆրեյդիստները՝ ենթագիտակցական մոտիվները, կոգնիտիվ հոգեբանները՝ մարդու իմացական կարողությունները, սոցիալական հոգեբանները՝ վարքի սոցիալական համատեքստը և անհատական ընկալումները: Հոգեբանները համարում են, որ տնտեսական վարքի դրսևորումները պայմանավորված են գլխավորապես անձի իմպուլսիվությամբ, զգացմունքայնությամբ, չգիտակցված և չվերահսկվող ներքին մղումներով, որոնք անձի վարքը դարձնում են հակասական և անկանխատեսելի: Ըստ տնտեսագետ Վ. Ս. Ավտոնոմովի՝ «կարելի է ասել, որ տնտեսական մարդու հոգեբանական մոդելում համադրվում են մարդու հաճույքները (Id), ներքնայնացված հասարակական նորմերը (Super-ego), և նրանց բարդ փոխհարաբերակցությամբ պայմանավորված անձնային բնութագիրը (Ego): Ֆրեյդիզմի տերմինաբանությամբ՝ տնտեսագիտական մոդելում փաստացի բացակայում են (Id)-ն ու (Super-ego)-ն: Մոդելը բաղկացած է միայն (Ego)-ից, որի գործառույթը արտաքին միջավայրին արդյունավետ հարմարվելու միջոցով պահանջումները

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 182:

լավագույնս բավարարելն է»⁸:

Շատ հետազոտողներ որպես անձի վարքի տնտեսագիտական մոդելի մասնակի այլընտրանք տեսնում են Մասլոուի պահանջմունքների հիերարխիկ սխեմայի վրա հիմնված հոգեբանական մոդելը: Նրանք համարում են, որ նախասիրությունների կանոնակարգված համակարգի վրա հենվող տնտեսագիտական մոդելը համահունչ է պահանջմունքներն ըստ կարևորությունների հերթագայության բավարարելու Մասլոուի սկզբունքին, համաձայն որի՝ կարիքների յուրաքանչյուր հաջորդ խումբ դրսևորվում և բավարարվում է միայն նախորդ խմբի կարիքները բավարարվելուց հետո: Տնտեսագետները ևս էլնում են պահանջմունքների կայուն հիերարխիայից, սակայն ի տարբերություն հոգեբանների՝ համարում են, որ մի պահանջմունքի բավարարումը կարող է մեծապես փոխհատուցվել մյուսի բավարարվածությամբ: Վ. Ս. Ավտոնովի կարծիքով՝ մարդու վարքի տնտեսական և հոգեբանական մոդելների մերձեցման հարցում ուշագրավ է Կարլ Փոփերի այլընտրանքային մոտեցումը: Ըստ Փոփերի՝ մարդու գործողությունները թելադրվում են հիմնականում իրադրության տրամաբանությամբ, ինչի վերլուծությունն էլ կարող է դառնալ տնտեսագիտական հետազոտության մեթոդ: Դիտարկելով իրադրության տրամաբանությունը՝ հետազոտողը կարող է խուսափել մարդու էության արդյունավետության հոգեբանական ենթադրությունից և սահմանափակվել իրադրության տրամաբանությամբ համապատասխանող վարքի արդյունավետության հետազոտությամբ⁹: Նման մոտեցումը հնարավորություն կտա կանխատեսելու և մեկնաբանելու անձի տնտեսական վարքի դրսևորումները՝ պայմանով, որ սահմանափակումների պատճառով ընտրությունը կարող է կատարվել տնտեսական իրավիճակով թելադրվող գործոնների ազդեցությամբ, որի պարագայում անհատի նախասիրությունները՝ որպես հոգեբանական գործոններ, երկրորդական դեր կարող են խաղալ:

Ինչ վերաբերում է տնտեսական վարքի սոցիոլոգիական մոդելներին, ապա դրանց հիմքում ընկած է ոչ թե անձնական, այլ հասարակական շահի կարևորումը: Անձն այս մոդելներում դիտարկվում է հասարակական հարաբերությունների համատեքստում, իսկ տնտեսական վարքի արդյունավետությունը պայմանավորվում և մեկնաբանվում է անձի կողմից հասարակական նորմերը պահպանելու գիտակցմամբ:

Մեթոդաբանական մոտեցումները

Անձի տնտեսական վարքի մոդելավորմանը նվիրված մեր հետազոտություններում գիտափորձի միջոցով ձգտել ենք բացահայտել անհատական-հոգեբանական (անկախ փոփոխականներ) և սոցիալ-հոգեբա-

⁸ Автономов В. С. Модель человека в экономической теории и других социальных науках // Теория и методология истории. Методологические основы современного экономико-политического анализа. М.: ГУ ВШЭ, 1988, с. 37.

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 47:

նական (կազուալ փոփոխականներ) գործոններով պայմանավորված այնպիսի օրինաչափություններ, որոնք ընկած են Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ որպես սպառողի՝ սոցիալ-քաղաքական իրավիճակով պայմանավորված տնտեսական վարքի դրսևորումների հիմքում: Հետազոտության ելակետ է ընդունվել այն դրույթը, որ ինչ գործոններով էլ անձի տնտեսական վարքը պայմանավորվի, նրա արդյունավետության հարցն ի վերջո հանգելու է նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը միտված ծախսերի նվազեցման խնդրին¹⁰: Այլ բան է, թե պահանջմունքների բավարարման համար ինչ գործողությունների կարող է անձը դիմել: Ակնհայտ է, որ գործողությունների վրա ազդում են ոչ միայն անձի կենսահոգեբանական առանձնահատկությունները (տարիք, սեռ, խառնվածք, բնավորություն), այլև սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակներով պայմանավորվող գործոնները, ինչից ելնելով էլ հետազոտության հիմքում դրվեց տնտեսական վարքի գործառնական-դինամիկ արդյունավետության սկզբունքը: Կիրառվել են վարքի ինքնակարգավորման ոճի բացահայտման Վ. Ի. Մորոսոնովայի, մեթոդիկան (ССИМ 98), անձի արժեքային կողմնորոշվածության ախտորոշման Շ. Շվարցի և հաջողության հասնելու անձի մոտիվացիայի ախտորոշման Թ. Էհլերսի մեթոդիկաները:

Ցանկացած ընտրանքային իրավիճակ լի է անորոշություններով: Անորոշության վերացումը հնարավոր է ինքնակարգավորման միջոցով այնքանով, որքանով մարդն ինքն է առաջադրում իր գործունեության նպատակները, ուսումնասիրում դրանց հասնելու պայմաններն ու ուղիները, վերահսկում և ուղղորդում արդյունքները: Ինքնակարգավորման ոճը, ըստ Վ. Ի. Մորոսոնովայի՝ դրսևորվում է նրանով, թե մարդն ինչպես է պլանավորում և ծրագրավորում նպատակների իրագործումը, արդյունքի հասնելու համար կարգավորում սեփական գործունեությունը և դիմում որոշակի գործողությունների: Ինքնակարգավորման գործընթացում առաջին պլան են մղվում անձի ուղղվածությունն ու ինքնագիտակցությունը, պահանջմունքային-մոտիվացիոն գործոնը¹¹: Անձի ինքնակարգավորման ոճը Վ. Մորոսոնովան բնութագրում է ըստ հետևյալ 6 պրոֆիլների՝ պլանավորում, մոդելավորում, ծրագրավորում, գնահատում, ճկունություն, ինքնուրույնություն:

Որոշում ընդունելու գործընթացում անձի որակները բնութագրե-

¹⁰ Տե՛ս **Վ. Վ. Ոսկանյան**, Անձի՝ հոգեբանական գործոններով պայմանավորված տնտեսական վարքի մոդելավորման մաթեմատիկական մոտեցման առանձնահատկությունները // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 3 (33), 2020, էջ 62-77, **Վ. Վ. Ոսկանյան**, Ապրանքագնային տարածության մաթեմատիկական մոդելը և նրա կիրառումը տնտեսական վարքի հոգեբանական հետազոտություններում // «Լրաբեր հայ-ռուսական համալսարանի. հումանիտար և հասարակական գիտություններ», ՀՌՀ հրատ., № 3 (36), 2020, էջ 58-84:

¹¹ Տե՛ս **Моросова В. И.** Индивидуальные особенности осознанной саморегуляции произвольной активности человека // Вестник моск. ун-та, серия 14, Психология, 2010, № 2, էջ 36-45:

լիս Տ. Վ. Կորնիլովան առանձնացնում է ռիսկի դիմելու պատրաստակամությունը և ռացիոնալությունը: Ռիսկայնությունը նա համարում է հակվածություն և ոչ թե այնպիսի իրադրության բնութագիր, որի պայմաններում պետք է որոշում կայացվի: Ըստ Վ. Կորնիլովայի՝ ռիսկայնությունը և ռացիոնալությունը պայմանավորված են անձի ինքնակարգավորման կարողությամբ և սեփական հնարավորությունների գիտակցմամբ, կապված են անձի անցյալի փորձի և անորոշ իրավիճակները փոփոխելու վերաբերյալ պատկերացումների հետ¹²:

Տնտեսական վարքի դրսևորումներում զգալի է անձի արժեքային համակարգի դերը: «Արժեք» հասկացության տակ նկատի ունենալով համամարդկային այն պահանջումները, որոնք պայմանավորված են տվյալ հասարակության մշակույթով և հոգեկերտվածքով, Շ. Շվարցն առանձնացնում է դրանց հասարակական և անհատական տեսակները: Արժեքները դիտարկում է որպես հասարակական վարքում անձի անհատական նախապատվությունների դրսևորում, որոնց տարբերության հիմքում ընկած են մոտիվացիոն նպատակները¹³: Անհատական արժեքները Շվարցը դասակարգում է ըստ հետևյալ 10 ցուցիչների՝ ինքնուղղորդում, խթանում, հեղոնիզմ, ձեռքբերում, իշխանություն, անվտանգություն, համաձայնություն, ավանդույթներ, բարյացակամություն, համընդհանրություն:

Մոտիվացվածությամբ պայմանավորված՝ անձի՝ ռիսկի դիմելու հակվածությունը կարող է ուժեղանալ կամ թուլանալ: Հաջողության ձգտելու մոտիվացիայի առկայությունն ախտորոշելիս Թ. Էիլերսը ելնում է այն դրույթից, որ անձը, որն ունի հաջողության հասնելու մեծ մոտիվացիա, նախընտրում է միջին կամ ցածր ռիսկայնություն և հակված է խուսափելու բարձր ռիսկերից: Նրանք, ովքեր ունեն հաջողության հասնելու ուժեղ կողմնորոշվածություն, գերադասում են միջին ռիսկայնությունը: Որքան բարձր է հաջողության հասնելու մոտիվացիան, այնքան ցածր է ռիսկի դիմելու անձի պատրաստակամությունը: Էիլերսը տարանջատում է մոտիվացվածության 4 մակարդակ ցածր, միջին, չափավոր բարձր, չափազանց բարձր:

Գիտափորձի արդյունքում ձևավորված տնտեսական վարքի մոդելի բնութագիրը

Տնտեսական վարքում դրսևորվող հոգեբանական օրինաչափու-

¹² St u **Корнилова Т. В.** Психология неопределенности: единство интеллектуально-личностной регуляции решений и выборов // Психологический журнал, 2013, 34 (3), էջ 89-100:

¹³ St u **Schwartz, S. H.** (2014). National culture as value orientations: Consequences of value differences and cultural distance. In V. Ginsburgh & D. Throsby (Eds.), Handbook of the economics of art and culture (Vol. 2, էջ 547-586). Amsterdam: Elsevier/North Holland. **Schwartz, S. H.** (2015). Basic individual values: Sources and consequences. In D. Sander & T. Brosch (Eds.), Handbook of value (էջ 63-84). Oxford, UK: Oxford University Press. **Schwartz, S. H.** (2017). The refined theory of basic values. In S. Roccas & L. Sagiv (Eds.), Values and behavior: Taking a cross-cultural perspective (էջ 51-72). Cham: Springer:

յունների բացահայտմանը միտված փորձարկումներն իրականացվել են ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնց միջին տարիքը եղել է 32,3:

Վարքի ինքնակարգավորման ոճի բացահայտման՝ Վ. Մորոսունովայի հարցարանից փորձարկվողների ցույց տված արդյունքների թվային միջին ցուցիչներն ըստ պրոֆիլների հետևյալն էին. պլանավորում՝ 3,37 միավոր, մոդելավորում՝ 3,81 միավոր, ծրագրավորում՝ 3 միավոր, գնահատում՝ 2,72 միավոր, ճկունություն՝ 2,83 միավոր, ինքնուրույնություն՝ 3,17 միավոր: Հանրագումարային միջինը կազմել է 16,09 միավոր: Հանրագումարային ամենաբարձր ցուցանիշ արձանագրվել է հարցման ենթարկվածների 4%-ի մոտ: Մրանք այն անձինք են, որոնք ինքնուրույն են, ճկուն և համարժեք են արձագանքում տնտեսական պայմանների փոփոխությանը, նրանց նպատակադրումը առավելապես գիտակցված է, վստահ են զգում անձանոթ իրավիճակներում, կայուն են առօրյա տնտեսական գործունեության մեջ, բարձր մոտիվացվածության դեպքում ի վիճակի են հաղթահարելու անձնային առանձնահատկությունների ազդեցությունը: Ցածր ցուցանիշ է արձանագրվել փորձարկվողների 85%-ի մոտ, ինչը նշանակում է, որ նրանց մեջ ձևավորված չէ վարքի պլանավորման և ծրագրավորման գիտակցված պահանջմունքը: Նրանք առավելապես կախված են իրավիճակից և շրջապատի մարդկանց կարծիքից: Մնացյալ 11%-ի ցուցանիշները միջին էին:

Ըստ պրոֆիլների *որակական ցուցիչների*՝ մասնակիցների քանակական բաշխվածության պատկերը վկայում է, որ փորձարկվողների կեսից ավելին ունեն ինքնակարգավորման ոճի պլանավորման, ծրագրավորման, գնահատման, ճկունության, ինքնուրույնության ցածր ցուցանիշներ: Մասնակիցների 60,21%-ի պլանավորման ցածր ցուցանիշը խոսում է տնտեսական իրավիճակները ոչ համարժեք ընկալելու մասին: Այս անձանց տնտեսական վարքն ուղեկցվում է իրադրությանն անհամարժեք գործողություններով: Նրանք ոչ միշտ են նկատում իրադրության փոփոխությունը, նման իրավիճակներում դժվարանում են մշակել նպատակին հասնելու գործողություններ: Մասնակիցների 82,65%-ի ծրագրավորման ցածր ցուցանիշը փաստում է գործողությունների հաջորդականության մշակման նրանց թույլ կարողությունը: Նման անձինք գերադասում են դիմել իմպուլսիվ գործողությունների, առաջնորդվում են փորձի և սխալի մեթոդով: 73,47%-ի գնահատման ցածր ցուցանիշն այս անձանց հաջողելու անհատական կարողության անկայունության ապացույց է: Ճկունության ցածր ցուցանիշ ունեցողները 75,51% էին, ինչը նշանակում է, որ դինամիկ և արագ փոփոխվող տնտեսական իրավիճակներում նրանք անվստահ են, դժվար են ընտելանում իրադրության փոփոխություններին, ի վիճակի չեն արագ վերակարգավորելու սեփական վարքը: Ինքնուրույնության ցածր ցուցանիշ ունեցողները 67,35% էին: Մրանք շրջապատի կարծիքից և գնահատականներից կախված անձինք են, որոնք գերադասում են հետևել այլոց խորհուրդներին:

Անհատական արժեքների համակարգի բացահայտման Շվարցի հարցարանի արդյունքները վկայում են, որ անձնային արժեքներից գերադասելի են համընդհանրությունը (17,7 միավոր), ապահովությունը (15 միավոր), ինքնուղղորդումը (11,6 միավոր), բարյացակամությունը (10,8 միավոր), համապատասխանությունը (9,6 միավոր), հեղոնիզմը (7,2 միավոր), ինչը նշանակում է, որ փորձարկվողները կարևորել էին անձնական և հասարակական համընդհանուր բարեկեցության պահպանումը, ներդաշնակությունը, կայուն իրավիճակը, անորոշությունների բացակայությունը, ընտանիքի և հասարակության անվտանգությունը:

Հաջողության հասնելու մոտիվացիայի ախտորոշման Թ. Էիլերսի հարցարանի արդյունքներով՝ փորձարկվողների 10,2%-ն ուներ մոտիվացվածության ցածր մակարդակ, 11,22%-ը՝ միջին մակարդակ, 40,82%-ը՝ չափավոր բարձր մակարդակ, 37,75%-ը՝ չափազանց բարձր մակարդակ: Վերջին երկու ցուցիչները վկայում են, որ փորձարկվողների 78,57%-ն ունի հաջողության հասնելու բարձր մոտիվացվածություն, այսինքն՝ տնտեսական գործարքներում նախընտրում է միջին կամ ցածր ռիսկայնություն, հակված է խուսափելու բարձր ռիսկերից:

Համադրելով փորձարկման արդյունքները կարելի է ընդհանրացնել, որ հայ սպառողի տնտեսական վարքին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- արտաքին սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությամբ իրավիճակային դետերմինիզմի սկզբունքով իրականացվող ընտրանքների առկայություն, հուզական դրդապատճառներով առաջնորդվելու հակվածություն,

- պլանավորման, ծրագրավորման, գնահատման, ճկունության և ինքնուրույնության ցուցանիշների ցածր մակարդակ, դինամիկ իրադրություններում անվստահություն, իրադրության փոփոխությանը ոչ համարժեք արձագանքում, սեփական վարքը վերակարգավորելու ցածր կարողություն, ինպուլսիվ գործողությունների առկայություն,

- հաջողության հասնելու բարձր մոտիվացվածությամբ պայմանավորված ռիսկերից խուսափելու հակվածություն, շրջապատի կարծիքից և գնահատականներից կախվածություն,

- անձնային արժեքներից համընդհանուր բարեկեցության պահպանման, ընտանիքի և հասարակության անվտանգության, իրավիճակի կայունության, կանխատեսելիության, համագործակցության, հեղոնիզմի (հաճույքներ, բավականություն, անձնական բարեկեցիկ կյանք) կարևորում:

Փորձարկումների ընթացքում մասնակիցներին խնդրել էինք դասակարգել Մաալուուի հիերարխիկ սխեմայի առաջին 5 պահանջումները (ֆիզիոլոգիական, ապահովության, սոցիալականացման, ճանաչվածության, ինքնիրացման) ըստ դրանց կարևորության: Փորձարկվողները նախապատվությունը տվել էին ապահովությանը. այն միակ պահանջումն էր, որ 2018 թվականի համեմատությամբ 8% աճ էր գրանցել: Մյուս 4 պահանջումների կարևորությունը նվազել էր: Այս փաստն ամե-

նայն հավանականությամբ պայմանավորված է այդ տարիներին տեղի ունեցած կազուալ փոփոխականների ազդեցությամբ (իշխանափոխություն, համաճարակային իրավիճակ, պատերազմ), ինչը, կարծում ենք, համահունչ է վերը թվարկված վարքային առանձնահատկություններին:

КАРЛЕН ВОСКАНЯН – *Психологические особенности ситуативной модели экономического поведения.* – Проблема моделирования экономического поведения, традиционно относившаяся к сфере экономической науки, сегодня стала также предметом изучения философии, социологии, психологии и юриспруденции. Междисциплинарный интерес к проблеме не случаен, так как вопросы, связанные с причинами и закономерностями экономического поведения, приобрели важное общественное значение. Экономическое поведение членов общества как потребителей сегодня стало непредсказуемым и не подчиняется алгоритмам экономического расчета. Необходимо выявить модели экономического поведения, которые выходят за рамки исследований экономической теории и нуждаются в исследованиях в смежных областях. В связи с этим актуальными в психологической науке стали такие исследования, связанные с проблемой экономического поведения, в которых также учитываются индивидуальные и этнопсихологические особенности человека.

В статье представлена сущность проблемы моделирования экономического поведения, некоторые экономические, психологические и социологические подходы к проблеме. Рассмотрена ситуативная модель экономического поведения, в которой индивидуальные психологические особенности личности и социально-психологические факторы выступают в качестве переменных. Перечислены те характерные черты модели, которые определяются способностью саморегуляции личности, ее ценностной системой и мотивацией достижения успеха.

Ключевые слова: *экономическое поведение, моделирование, рациональность поведения, психологические факторы, саморегуляция, система ценностей, мотивация, ситуативная модель*

KARLEN VOSKANYAN – *Psychological Features of the Situational Model of Economic Behavior.* – The problem of modeling economic behavior, traditionally related to the field of economic science, today has also become the subject of study of philosophy, sociology, psychology and jurisprudence. The interdisciplinary interest in the problem is not accidental, since issues related to the causes and patterns of economic behavior have acquired an important social significance. The economic behavior of members of society as consumers today has become unpredictable and does not obey the algorithms of economic calculation. It is necessary to identify models of economic behavior that are beyond the scope of economic theory studies and require research in related fields. In this regard, such studies related to the problem of economic behavior, which also take into account the individual and ethno-psychological characteristics of a person, have become relevant in psychological science.

The article presents the essence of the problem of modeling economic behavior, some economic, psychological and sociological approaches to the problem. A situational model of economic behavior is considered, in which individual psychological characteristics of a person and socio-psychological factors act as variables. The characteristic features of the model are listed, which are determined by the ability of self-regulation of the individual, the value system of the individual and the motivation to achieve success.

Key words: *economic behavior, modeling, rationality of behavior, psychological factors, self-regulation, value system, motivation, situational model*

THE ROLE OF THE PERSONALITY TRAITS AND MOTIVATION IN MANIFESTATION IN PEDAGOGUES' COMPETENCIES*

VARDUHI PAPOYAN, ALINA GALSTYAN,
DIANA SARGSYAN, MILENA KARAPETYAN

The article presents the role of personality traits, personal qualities and motivation in the context of formation of the competences of pedagogues. The personality traits and the personal qualities which consider more stable characteristics of the person, as well as motivations which give direction to the person's activity is also the basis for the formation of competencies of the person. The research was carried out by pedagogues from both community and city schools of the Republic of Armenia, with a total of 115 people. Of the data, the results of 99 respondents were valid.

The study used a five-factor personality model, revealed the relationship of personal qualities with motivation. The analysis of the results showed that the main role of the formation and development of the competencies have such personality traits as Openness to experience, Agreeableness, Conscientiousness and Motivation. The motivation is absorbed as a satisfaction of the process and the result of the work, as well as the possibility of the most complete self-realization in this particular activity. The motivation is manifested when the activity of the pedagogue is of paramount importance for the individual.

Keywords: *professional competencies, personal traits, motivation, personal qualities*

The modern researcher Guerrero Dante the term of competence explained that it comes from the Latin words *competentia* and *competens*. These terms imply competition, struggle, go hand in hand with someone or something for some purpose. In Spanish the words “*competir*” (compete) and “*competer*” (competitor) express the above expression from the point of view of taking responsibility. From Latin, the term “*compens*” can also be translated as *adequate/suitable*. It is important that the interpretation of the word in different languages is not multifaceted, to avoid further confusion¹. In Armenian the word of competence is explained as a capability and studied in a field of personality psychology². The term competence has transcultural overtones which is why his multifaceted studies. Evolutionary development of the concept of professional competence is presented in 7 stages³:

* This work was supported by the Science Committee of RA Research project № _21T-5A044

¹ Guerrero, Dante, De los Rios, Ignacio, Professional competences: a classification of international models, *Procedia – Social and Behavioral Sciences* 46, 2012, p. 1291

² Papoyan V., Galstyan A., Sargsyan D., (2022). Transformation of Professional Psychosocial Competencies in Crisis Conditions: Bulletin of Yerevan University E: Philosophy, Psychology, 13(1 (37), p. 52–58. <https://doi.org/10.46991/BYSU:E/2022.13.1.052>

³ A. Terracciano, A.M. Abdel-Khalek, N. Adam, L. Adamovova and etc., National character does not reflect mean personality trait levels in 49 cultures, *Science*. Author manuscript, available in PMC 2009 p. 96-100, doi: 10.1126/science.1117199

- Greek philosophy;
- Modern philosophy;
- Sociology;
- Job changes around the world;
- Education for work;
- Cognitive psychology;
- Psychology of organization.

In terms of all these stages, professional competencies and skills have undergone special changes at certain stages, such as the professional education stage and the advent of organizational psychology enabled the concept of competence to be considered as a list of tasks, a proportion of attributes, and one integrative whole⁴. The term professional competences in modern approaches most often reflects the employee's ability to perform the functions assigned to the position in accordance with the given standards⁵. Two main approaches to interpretation can be distinguished for professional competencies:

1. A person's ability to function to appropriate standards
2. Personal characteristics that allow him to achieve results at work.

Thus, based on the above-mentioned two approaches, competences can be distinguished by the following types of description: The first can be conventionally called "functional" because it is based on the description of functions and expected results. The second can be called "personal", because it is the personal qualities that ensure work success.

Based on modern developments, American scientists (A. Fischer, J. Neubert, 2015) for example highlighting issues such as characteristics of a person, his identification, self-realization, self-expression and other important issues are more prone to a "personal" approach. They limit the concept of professional competence to personal qualities, abilities, knowledge and apply the following model KSAO⁶:

Knowledge ← - - → Skills ← - - → Abilities ← - - → Other.

The authors themselves believe that Knowledge and Skills are the most easily measurable of these four factors and abilities and Other are hard to measure, because, for example, attitudes are also included in Abilities, while the Other deals with more variable categories, such as the physical condition of a person, behavior, etc. They believe that knowledge and skills are the most easily measurable of these four factors and abilities and other are hard to measure. For example, attitudes are also included in abilities, while the other deals with more variable categories, such as the physical condition of a person.

You can find many similar descriptions of professional competences, which are mainly presented in the following four dimensions⁷:

⁴ **Климов Е.А.**, Психология профессионального самоопределения: 4-е изд., стер.-М.: Издательский центр «Академия», 2010, 304с.

⁵ **McClelland, D. C.** (1973). Testing for competence rather than for "intelligence." *American Psychologist*, 28(1), 1–14. <https://doi.org/10.1037/h0034092>

⁶ **A. Fischer, J. Neubert**, The multiple faces of complex problems: A model of problem solving competency and its implications for training and assessment, *Journal of Dynamic Decision Making*, 2015, p. 2-5, DOI: <https://doi.org/10.11588/jddm.2015.1.23945>

⁷ **Nessipbayeva O.** The competencies of the modern teacher, Pre-service and In-service teacher training, 2012, p. 148-154

- Sufficient availability of abilities;
- Sufficient availability of physical or intellectual qualities;
- The ability to do something well or according to the standards;
- Based on experience or learn by yourself.

The requirements for modern education have changed, to make education relevant to the technical developments and changes, through which society passes and for professionals to be able to meet the demands of innovation is paramount considered the review of the competencies of pedagogues. Now pedagogues are subject to new requirements/expectations to build such an educational environment that will contribute to the provision of effective education. Here, such qualities of the pedagogue as the emotional inclusion of the pedagogue and the relevant competencies are highlighted. Recently, such groups of basic competencies are considered primary for pedagogues such as classroom management, instruction, assessment, emotional inclusion, personal competencies (soft skills). These categories can be decisive importance in the process of pedagogue training, contributing to the improvement of pedagogue's competence. Emphasizing the connection between academic success and education with the fact that the combination of knowledge and skills form competencies highlights the role of pedagogues in education reform. Modern knowledge and information about the profession, what kind of education practice and how we can promote the development of professional competencies are important for the advancement of the field⁸.

At present, the relevance of applying such knowledge and skills are key which correspond to the most important values of the given society and are effectively implemented accordingly within society⁹. The work of a pedagogue includes a wide range of functions, such as participation in the creation of educational programs at school, educational supervision to the implementation of the process, consistency and process evaluation, ensuring multilateral cooperation and of course, the evaluation of the results for further improvement. That is why targeted approaches of pedagogues to education are important, because from here the possibility of effective applicability of knowledge and skill in everyday life must still be considered¹⁰.

